Azg Ազգ

22 ՅՈՒԼԻՍ 2011 ՈՒՐԲԱԹ 135(4754)

ISSN: 1829-1651

Վերադարձնել ոչ միայն եկեղեցիները, այլեւ ձեռագրերը, արքեպիսկոպոսները...

Միացյալ Նահանգների Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը հուլիսի 20-ին 43 կողմ եւ 1 դեմ քվեարկությամբ հաստատել է Բերման-Սիսիլյանի ներկայացրած 2583 օրենսդրական փոփոխությունը, որի համաձայն 2012 թ. ֆինանսական տարում Թուրքիան պետք է երաշխավորի իր քրիստոնեական ժառանգության պահպանումը:

Ինչպես տեղեկացնում է Ամերիկայի հայկական համագումարը, 306 բանաձեւում ներկայացված այս փոփոխությամբ Թուրքիայի կառավարությանը ԱՄՆ-ը կոչ է անում կատարել միջազգային պայմանագրերով եւ մարդու իրավունքների միջազգային իրավունքով ստանձնած իր պարտավորությունները՝ «վերջ դնելու կրոնական խտրականության բոլոր ձեւերին, թույլ տալ քրիստոնեական եկեղեցական ունեցվածքի իրական սեփականատերերին առանց խոչընդոտների կամ արգելքի կազմակերպել եւ իրականացնել ծիսական արարողություններ, կրոնական կրթություն, հավատներ, սոցիալական ծառայություններ եւ կրոնական այլ գործողություններ»:

Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ընդունած լրացմամբ Թուրքիային կոչ է արվում նաեւ իրենց իրական տերերին վերադարձնել քրիստոնեական եկեղեցիները եւ այլ սրբավայրերը, մենաստանները, դպրոցները, հիվանդանոցները, կրոնական այլ ունեցվածքը, ներառյալ շարժական ունեցվածքը, ինչպիսին են ձեռագրերը, սրբապատկերները, ծիսական սպասքը:

Եվս մեկ կետով Թուրքիայից պահանջվում է քրիստոնեական եկեղեցիներին եւ նրանց սեփականատերերին թույլատրել առանց արգելքի կամ խոչընդոտի վերանորոգել, վերականգնել իր ունեցվածքը:

Ամերիկայի հայկական, հունական եւ ասորական համայնքները ողջունել են այս փոփոխության ընդունումը, որ կարող է հիմք դառնալ Թուրքիայում քրիստոնեական ժառանգության պահպանման ու պաշտպանության համար, ընդ որում, այդուհետեւ նորոգվող որեւէ եկեղեցի չպետք է դառնա թանգարան՝ անհնար դարձնելով այդ եկեղեցիներում աղոթք բարձրաձայնելու ցանկությունը:

Ա. Հ.

Հանդիպում Վլադիմիր Պուտինի հետ

2011թ. հուլիսի 19-ին տեղի ունեցավ ՌԴ վարչապետ Վ. Վ. Պուտինի հանդիպումը կրոնադավանական ուղղությունների, ազգային-մշակութային եւ հասարակական կառույցների ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը մասնակցեց «Ռուսաստանի հայերի միություն» (ՌՀՄ) համառուսաստանյան հասարակական կազմակերպության նախագահ Արա Աբրահամյանը:

Իր ելույթում նա մասնավորապես նշեց, որ ավելի քան 10 տարվա գործունեության ընթացքում ՌՀՄ-ն, ի թիվս այլ հարցերի, գործնական աշխատանք է իրականացրել ազգամիջյան հարաբերություններում համերաշխության մթնոլորտ ստեղծելու գործում: Նշելով, որ իր ղեկավարած հասարակական կազմակերպությունը, որի կազմում 640 տարածքային բաժանմունքներ են գործում, տարեկան երկու հազարից ավելի միջոցառումներ է իրականացնում, նա առանձնացրեց վերջերս ձեւավորված «Ժողովրդական ճակատի» դերն այս կարեւորագույն խնդրում:

Արա Աբրահամյանը հատուկ ուշադրություն հրավիրեց երիտասարդության շրջանում վարվող քաղաքականության առանձնահատկությունների վրա, շեշտելով լրջագույն հիմնախնդիրների առկայությունը:

«Ես ուզում եմ առաջարկել «Ժողովրդական ճակատ» կառույցում ստեղծել հանձնաժողով կամ քննարկում նախատեսող հարթակ, ուր բոլոր շահագրգռ կողմերը հնարավորություն կունենան մանրամասն քննարկելու այն խնդիրները, որոնք գոյություն ունեն ազգամիջյան հարաբերություններում եւ երիտասարդական քաղաքականությունում: Նման մոտեցումը հնարավորություն կընձեռի ծագած խնդիրների մասին ժամանակին իրազեկելու մեր երկրի բարձրագույն ղեկավարությանը»:

Որպես հաջողված միջոցառում, Արա Աբրահամյանը հիշատակեց անցյալ տարի Սոչիում ՌՀՄ-ի կողմից կազմակերպված համառուսաստանյան երիտասարդական ֆորումը, ուր 80 երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներ իրենց մտահոգությունն էին հայտնում երիտասարդության շրջանում կուտակված սոցիալական հիմնախնդիրների վերաբերյալ:

Ելույթի վերջում Արա Աբրահամյանը հայտարարեց, որ պատրաստ է իր առաջարկությունները փոխանցել ՌԴ կառավարության աշխատակազմի ղեկավարին:

Ռուսաստանի հայերի միության հասարակայնության հետ կապերի բաժին

ՀԱՄԱՌՕՏ

Կենսաչափական անձնագրերը՝ 2012-ի առաջին եռամսյակից

Հիմք ընդունելով «Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի ներդրման աշխատանքների (ծառայությունների) կատարման մրցույթի արդյունքները», կառավարության որոշմամբ նախապատվություն է տրվել երկու կազմակերպության եւ աշխատանքի կատարման պայմանագիր օրինակելի ձեւին: Վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ Եվրոմիության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ կնքված համաձայնագրով Հայաստանի քաղաքացիներն առաջին նոր անձնագրերը կարող են ստանալ 2012 թ. առաջին եռամսյակից:

Գյումրու տեխնոպարկի կառավարումը տրվեց Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամին

Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման 2011-ի ծրագիրը եւ միջոցառումների ցանկը երեկ հաստատվեց կառավարությունում: Համաձայն դրա, նախատեսվում է տեխնոպարկի կառավարումը վերապահել Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամին, իրագործել նորարարության ու ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցությանն ուղղված ծրագրեր, համաֆինանսավորել Համաշխարհային բանկի տեխնոլոգիայի մրցունակության բարձրացման ծրագրի նախապատրաստման վարկային ծրագիրը, հիմնել ծրագրային աղահովման, դիզայնի, մուլտիմեդիայի լաբորատորիա:

Ա. Մ.

Ֆրանսիան Քադդաֆիին առաջարկում է «ներքին աքսոր»

Լիբիական հեղափոխության առաջնորդ Մուամմար Քադդաֆին կկարողանա մնալ Լիբիայում, եթե չմասնակցի երկրի քաղաքական կյանքին: Այդ մասին հայտարարել է Ֆրանսիայի արտգործնախարար Ալեն Ժյուպեն հեռուստալիքներից մեկին տված հարցազրույցում: Նրա կարծիքով, դա հրադադարի նախապայմանն է:

«Քննարկվող տարբերակներից մեկն այն է, որ Քադդաֆին մնում է Լիբիայում՝ պայմանով, որ ամենայն որոշակիությամբ հեռացվում է երկրի քաղաքական կյանքից: Մենք հենց դա ենք ակնկալում հրադադարի քաղաքական գործընթաց սկսելուց առաջ: Կրակի դադարեցումը կախված է քաղաքացիական եւ զինվորական իշխանությունից հրաժարվելու Քադդաֆիի պաշտոնական ու հատակ պարտավորությունից», ասել է Ժյուպեն:

Արտգործնախարարը հասկացրել է, որ Լիբիայի ղեկավարին ձերբակալելու Միջազգային քրեական դատարանի կարգադրության հարցը «ներկայումս չի քննարկվում»: ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը մեջբերում է նրա հետեւյալ խոսքերը. «Ինչ-ինչ արարողակարգեր կբարունակվեն, բայց արվելիք հետեւությունների հարցը քննության կառնվի բանակցությունների ընթացքում»:

Ժյուպեն խոստովանել է, որ ռազմական առումով ապստամբների օգտին «նկատելի տեղաշարժ չկա», բայց առկա է «որոշակի առաջընթաց»: Այդուհանդերձ նա Լիբիայում ռազմական գործողության ավարտման կոնկրետ ժամկետ չի նշել:

Ղավեշտ. Ադրբեջանը կրոնական հանդուրժողականության օրինակ

«Յուրաքանչյուր պետություն պետք է հոգ տանի կրոնական փոքրամասնությունների պաշտպանության համար», այս մասին Բաքվում հայտարարել է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի պատվիրակության ներկայացուցիչ **Լուկա Վոլոնտեն**, որը, ի շարս այլ պատվիրակների, Ադրբեջանում մասնակցել է «Հանդուրժողականության ավանդույթները Ադրբեջանում եւ միջկրոնական երկխոսությունը» թեմայով կլոր սեղանին:

Որ այս քննարկման վերտառությունն անգամ ծիծաղելի ու առավելապես ծաղրանք է հնչում հենց Եվրոպայի համար, զարմանալու տեղիք չի տալիս: Սակայն բնավ էլ տրամաբանական ու տեղեկացված չի կարելի համարել նույն Վոլոնտեի դատողությունները, որը մյուսների հետ Բաքվում եղել է նաեւ հայկական եկեղեցում, թե «Ադրբեջանն իր հանդուրժողականությամբ կարող է օրինակ լինել մուսուլմանական աշխարհում»: ԵԽԽՎ պատվիրակը, ըստ «Սալամնյուզի», նաեւ պարզաբանել է, թե «Ադրբեջանում կան կրոնի, դավանանքի ազատություն եւ հանդուրժողականություն»:

Եվ սա այն դեպքում, որ թեկուզ միայն 2005 թվականի դեկտեմբերին Նախիջեւանում Ջուղայի խաչքարերն ու տաղանատարերն ադրբեջանական զինվորների ձեռքով ավերվեցին ու բեռնատարներով լցվեցին Արաքսը, ընդ որում, եթե ժամանակին հայերի դեմ խտրական քաղաքականությունը հայաթափ արեց Նախիջեւանը, ադրբեջանական մշտի տրամաբանությամբ, այդ ամենին զուգահեռ իրականացվող մշակութային արժեքների ոչնչացումը դարձավ հայերի գոյությունը բացառելու ամենահեշտ ճանապարհը:

Ու հիմա Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի պատվիրակությունը, որ Ադրբեջանում կրոնական հանդուրժողականության մասին զեկույց է պատրաստելու, այս երկիրն է մատնացույց անում որպես օրինակ մուսուլմանական աշխարհի համար...

Ա. Հ.

Եվրոխորհրդարանականների տարօրինակությունները

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Իլհամ Ալիեւը հանդիպել է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի մի խումբ պատվիրակների հետ: Ադրբեջանի նախագահի պաշտոնական կայքէջը տեղադրել է եվրոխորհրդարանականներին հղած նրա ելույթը:

Բնականաբար, Իլհամ Ալիեւը բաց չի թողել առիթը եւ վերստին անդրադարձել է նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդրին: Եվրոպացիներին ներկայությամբ, իհարկե, նա իրեն թույլ չի տվել ԼՂ հայերին «հյուր եկած» անվանել, ոչ էլ խոսել է «Արեւմտյան Ադրբեջանի» թեմայով: Իլհամ Ալիեւը չի անդրադաձել նաեւ «թուրքական միասնական աշխարհի մասնատմանը»:

Դա, սակայն, չի նշանակում, թե նա դարձի է եկել: Ոչ: Եվրոխորհրդարանականների հետ շփվելիս Իլհամ Ալիեւը նախընտրել է նրանց համար «հասկանալի շեշտադրումներ անել»: Նա ասել է, որ «Հայաստանը ձգձգում է բանակցությունները, որպեսզի չհեռանա «օկուպացված տարածքներից» (չակերտները մերն են- Վ.Ա.) եւ հասնի Լեռնային Ղարաբաղի անկախությանը»: Եվ իսկույն էլ անցել «հիմնավորումներին», թե Լեռնային Ղարաբաղը «ինչու չի կարող անկախ լինել»:

Իլհամ Ալիեւը նախ աշխարհագրական «փաստարկ» է բերել եւ ասել, որ «Լեռնային Ղարաբաղը գտնվում է Ադրբեջանի կենտրոնում»: Ադրբեջանի «տիրակալը», հավանաբար, ժամանակին հաճախել է մտավոր թույլ զարգացած երեխաների դպրոց: Այլապես կիմանար, որ Հայաստանի հետ սահմանակից Լեռնային Ղարաբաղը ոչ մի կերպ «չի կարող գտնվել Ադրբեջանի կենտրոնում»: Իսկ եթե նա նկատի է ունենում, որ «Ադրբեջան է նաեւ Հայաստանը», ապա այստեղ ծագում է եվրոխորհրդարանականների մտավոր եւ քաղաքական լիարժեքության հարց:

Պարզ ասած, այդ մարդիկ, անկախ արարողակարգի նրբություններից, պետք է Իլհամ Ալիեւից հետաքրքրվեին, թե ինչպե՞ս է «Լեռնային Ղարաբաղը գտնվում Ադրբեջանի կենտրոնում», եթե սահմանակից է Հայաստանին: Եվրոխորհրդարանականները, սակայն, նման «տհաճություն» Իլհամ Ալիեւին չեն պատճառել: Այդ դեպքում հարց է առաջանում, նրանք առհասարակ ինչո՞ւ են գալիս մեր տարածաշրջան: Մի՞թե, մասնավորապես, Եվրոպայի խորհրդի՝ որպես կառույցի, նշանակությունը: Մարդիկ Ստրասբուրգում հավաքվում եւ ի՞նչ հարցեր են քննարկում, եթե ԵԽ անդամ պետության նախագահը նույն կառույցի խորհրդարանականների ներկայությամբ ԵԽ անդամ մեկ այլ պետության՝ միջազգայնորեն ճանաչված տարածքը համարում է «ադրբեջանական»:

Տես էջ 2

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Նախագահից ընդունելություն խնդրողին չեն մերժի

Ըստ Գագիկ Մինասյանի

ՀԱԿ-իշխանություն երկխոսության իշխանական կողմը ներկայացնող կոալիցիոն աշխատանքային խմբի անդամ ՀՀԿ-ական **Գագիկ Մինասյանը** երեկ լրագրողների հետ հանդիպմանը առաջին հանդիպման դրական լիցքերը երկխոսությունը շարունակելու պայման համարեց: Ոչ թե պատվիրակություն, ինչպես բոլորն են ասում, այլ աշխատանքային խումբ կազմած՝ ՀԱԿ-ի հետ երկխոսելու են բոլոր հարցերի վերաբերյալ, իսկ բուն որոշումները կայացվելու են այդ որոշումները կայացնելու համար օրենքով եւ սահմանադրությամբ սահմանված մարմիններում: Բոլորին տանջող հարցին, թե արդյո՞ք արտահերթ ընտրությունների թեմայով քննարկումներ կլինեն, Գ. Մինասյանը պատասխանեց նախորդ օրերին արտահայտված իր ՀՀԿ-ական գործընկերների նման. հարցի վերաբերյալ դիրքորոշում ունենալու պարագայում չպետք է վախենալ դրա քննարկումից, բայց եւ՝ իշխանությունը բացառում է արտահերթ ընտրության անցկացումը:

Մինասյանն ասում էր, որ եթե 2008-ին նման երկխոսական հարթակ լիներ, մարտի 1-ի դեպքերը չէին լինի, իսկ հիմա կողմերը գիտակցում են, որ ավելի լավ է երկխոսել եւ կարծիքներ փոխանակել, քան գնալ հակամարտելու ճանապարհով, ու դրան պետք է նպաստի ամեն ինչ, քանի որ նոր քաղաքական մշակույթ է սկիզբ առնում. «Հիշեք, թե մարտի 1-ն ինչ ծանր հետեւանքներ ունեցավ բոլորիս համար, եւ եթե մենք ունենայինք նման հարթակ եւ նման ընբռնում իշխանության եւ ընդդիմության միջեւ, եւ այդ ընբռնման արդյունքում գայինք ընդհանուր լուծումների, ապա դա տեղի ունենալ չէր կարող», ասաց նա: Իսկ թե ի՞նչ է փոխվել 2008-ից հետո, ըստ Գ. Մինասյանի, «բոլորս միասին խելքի ենք եկել», եւ «իմաստնությունը գալիս է փորձից», այնպես որ «բոլորս ենք հասունացրել» երկխոսությունը: Իսկ ՀԱԿ-ի՝ առաջին երկխոսական հանդիպումից հետո տարածած հայտարարության պահանջները իրենց աշխատանքային քննարկման ժամանակ ՀԱԿ-ը չի ներկայացրել, ընդհանրապես՝ հանդիպումների ընթացքում կարող են քննարկվել սուր հարցեր, բայց առաջին հանդիպման դրական մթնոլորտը եթե կարողանան պահել, ապա գործընթացը հաջողության կսանի: Իսկ գործընթացը չողջունողների մասով էլ նկատեց, թե ամեն լավ գործ սկսելիս հասարակությունը բաժանվում է լավատեսների եւ հոռետեսների:

Երկխոսության՝ նախագահ Սարգսյան-Տեր-Պետրոսյան ձեւաչափով, շարունակություն հնարավո՞ր է. այս հարցի պատասխանը Գագիկ Մինասյանը չուներ.«Սակայն չեմ կարծում, որ եթե որեւէ քաղաքական ուժի ներկայացուցիչ ընդունելություն խնդրի նախագահից, նրան մերժեն», ասաց նա: **Մ. Ղ.**

Ասելիք չունեն, ավաղ...

Վերջերս ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վ. Դալլաքյանը հրապարակավ մի անսովոր, ավելի ճիշտ՝ արտառոց հայտարարություն արեց: Նա իր անկեղծ զարմանքն ու հիասթափությունը արտահայտեց, բոլորիս տեղյալ պահելով, որ մեր պառլամենտի անդամների շուրջ 1/3-ը համապատասխան մանդատ ստանալուց հետո դահլիճում, տարբեր հարցերի քննարկումների ժամանակ «մի ծոցուն էլ չի հանել»: Ընտրողներին շռայլ խոստումներ են տվել, վստահության քվե ստացել ու հենց որ ընտրվել են օրենսդիր իշխանության անդամ, այ քեզ բան՝ գերադասել են մնալ «խաղից դուրս» իրավիճակում: Ինչպե՞ս հասկանալ նման տարօրինակ ու խիստ տհաճ երեւույթը՝ բոյկո՞տ է դա, թե՞ արհամարհանք: Հաստատ՝ ոչ այս, ոչ այն: Հարգարժան Վ. Դալլաքյանն էլ, պետք է ենթադրել, բաշատեղյակ է, թե ինչու են ժողովրդի այդ «**ծառաները**» բերանները ջուր առել: Հարցին, իր հերթին պարզաբանում տվեց թերթերից մեկը, մեր իմացածը «հարստացնելով» էլ ավելի խայտառակ իրավիճակի մասին մանրամասներ հայտնելով: Պարզվում նաեւ, որ մի ամբողջ խումբ պատգամավորներ, առավելապես՝ պիտակավորներ, երկար ժամանակ չեն ներկայանում նիստերի՝ պատճառաբանելով վատառողջությամբ: Ինքներդ դատեք՝ հնարավո՞ր է այնքան երկար հիվանդանալ, որ ավելի քան 300 նիստից միայն, դա դժվար է երեւակայել, մեկին ներկա լինել: Այս հակառեկորդով նրանք հաստատուն տեղ կարող են ունենալ Գինեսի հայտնի գրքում: Ի դեպ, սա կարելի է վերագրել նաեւ «անժամկետ հիվանդությունների» փաստաթղթերը հաստատող վայ-բժիշկներին:

Իսկ եթե ուղղակի ասենք, ապա կասկածից վեր է, այդ «ընտրյալները» պահ են մտել, քանի որ պարզապես ոչ միայն ասելիք չունեն, այլեւ, որ ավելի է ցավալի, լուրջ խոսք ասելու ունակ էլ չեն: Տարբեր թերթերում լրագրողների հարցերին տված բազարային լեզվով պատասխանների տպագրությունը այլ բան չի վկայում: Զարմացնում է եւս մեկ հանգամանք. այդ ինչպե՞ս է, որ մեր Ազգային ժողովի հեղինակության հետ շարունակ չարկայակ խաղացողներից չեն պահանջում վայր դնել մանդատները:

Վերջերս ընդունված «Հայոց լեզվի մասին» օրենքում որոշակի նշված է, որ Հայաստանի քաղաքացիները, առաջին հերթին իշխանության ներկայացուցիչները, քաղաքագետները, հասարակական կազմակերպությունների ղեկավարները, ում գրեթե ամեն օր տեսնում ենք հեռուստաէկրանին, պարտավոր են անաղարտ տիրապետել մայրենիին: Ինձ թույլ կտամ մի փոքրիկ հավելում անել. եթե թեկուզ ընտրությունների ժամանակ բավարար չափով ձայներ են գրանցվել թեկնածուի օգտին, սակայն նրա ինտելեկտուալ, մասնագիտական ունակությունները, պարզվում է, ակնհայտորեն կաղում են, եթե ոչ միայն պահանջվող մակարդակով չի տիրապետում մայրենիին, այլեւ չգիտի գոնե մեկ օտար լեզու, պատգամավորի մանդատի մասին խոսքը պետք է անմիջապես բացառել: Հանուն ոչ միայն Ազգային ժողովի, այլեւ Հայաստանի Հանրապետության պատշաճ վարկանիշի:

ՄԵՍՔԱՔ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

«ԴԱՀԿ ծառայության հերթական կամայականությունը»

Հունիսի 3-ին «Ազգը» տպել էր «Երեւանի քաղաքացու դիմումն արդարադատության նախարարին» վերնագրով հոդվածը, որտեղ հանգամանալից ներկայացրել էինք, թե դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը (ԴԱՀԿ) ինչպիսի կամայականությունների է ընդունակ: Մեզ հետ հարցազրույցի միջոցով Երեւանի բնակիչ Պողոս Թելֆեջյանը դիմել էր արդարադատության նախարարին՝ խնդրելով իր դիմումն ընդունել որպես պատշաճ բողոք՝ ուղղված էջմիածնի ԴԱՀԿ ծառայության դեմ: Հիշեցնենք, որ 3 տարի առաջ Արտիմետ գյուղի բնակիչ Զավեն Հարությունյանը Երեւանի բնակիչ Պողոս Թելֆեջյանից պարտքով վերցրել է 64 հազար դրամ, սակայն սահմանված ժամանակում գումարը չի վերադարձրել: Տեսնելով, որ գումարը հետ ստանալու ուրիշ ելք չկա՝ Պողոս Թելֆեջյանը հայցադիմումով դիմել է դատարան, որպեսզի գումարը հետ ստանա օրենքի ուժով: Բայց անգամ օրենքի ուժով գումարն ամբողջությամբ հետ ստանալ նրան չի հաջողվել, քանի որ էջմիածնի ԴԱՀԿ ծառայությունը, ըստ նրա, հրաժարվում է կատարել իր պարտականությունները: Մինչ նախորդ հոդվածի հրապարակումը 76-ամյա Պողոս Թելֆեջյանն ընդամենը ստացել էր 45 հազար դրամ, այնինչ պարտապանի պարտքն այդ ժամանակ արդեն կազմում էր 125 հազար դրամ:

Պարոն Թելֆեջյանը, սակայն, չի հուսահատվել, եւ ասում է, որ շարունակելու է պայքարել ԴԱՀԿ ծառայության ապօրինությունների դեմ. «Սա դարձել է արդեն սկզբունքի հարց»: Նախորդ հրապարակումից հետո ԴԱՀԿ ծառայությունը կարծես փոքր-ինչ սթափվել էր եւ պարտապանից բռնագանձել ու պահանջատիրոջը փոխանցել էր 30 հազար դրամ: Այնուհետեւ «Ազգ» օրաթերթը դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից ստացավ հաղորդագրություն, որտեղ նշված էր. «Բռնագանձման ենթակա մնացորդ գումարը հունիսի 7-ի դրությամբ կազմում է 42.300 դրամ, որը պարտապանն իր ընտանիքի անդամների հետ պարտավորվել է վճարել մինչեւ այս տարվա հունիսի 30-ը»: Սույն հաղորդագրությունը խմբագրությունը ստացել է հունիսի 16-ին: Անցել է ավելի քան 1 ամիս, սակայն Պողոս Թելֆեջյանը մնացած գումարը դեռեւս չի ստացել: Այսինքն՝ հերթական անգամ գործ ունենք քմահաճույքի հետ: ԴԱՀԿ-ի ուղարկած հաղորդագրության մեջ գրվածը չի համապատասխանում իրականությանը: Այստեղ նշված է, թե պարտապանի բաժնեմասը հանդիսացող 1520 քմ վարելահողը պետական գրանցում եւ սեփականության իրավունքի վկայական չի ստացել, ուստի հնարավոր չի եղել կազմակերպել էլեկտրոնային հարկադիր աճուրդ: Պողոս Թելֆեջյանը ԴԱՀԿ-ի պատճառաբանությունն անհիմն է համարում: Նա ցույց է տալիս Վարչական դատարանի վճիռը, որտեղ նշված է՝ Արտիմետ գյուղում գտնվող 7600 քմ վարելահողից 1520 քմ հատվածն առանձնացվել է սեփականության իրավունքով, եւ դա հենց պարտապան Զավեն Հարությունյանի բաժնեմասն է, որի վրա պետք է տարածվի բռնագանձումը: Վարչական դատարանի էջմիածնի նստավայրի 2010-ի նոյեմբերի 1-ի վճռի մեջ նաեւ նշված է. «Օրենքը չի պահանջում, որ համապատասխան բաժնեմասի վերաբերյալ նախապես ձեռք բերվի սեփականության իրավունքի վկայական, որից հետո միայն իրականացվի բռնագանձումը»: Վճռի մեջ հստակորեն նշված են վճռի պահանջը կատարելու հնարավորություններն ու հիմքերը, սակայն ինչ-ինչ պատճառներից դրդված՝ ԴԱՀԿ-ը չի ուզում հողը դնել աճուրդի: «Նորից եմ կրկնում՝ ինձ համար կարեւոր է, որ արդարություն լինի, եւ ԴԱՀԿ-ը կատարի իր պարտականությունը, մինչդեռ այսօր ԴԱՀԿ-ի մարմինների համար Վարչական դատարանի վճիռը չունի նույնիսկ այն թղթի արժեքը, որի վրա գրված է»: Պողոս Թելֆեջյանը կրկին դիմում է արդարադատության նախարարին, որպեսզի գոնե վերջինս զբաղվի էջմիածնի ԴԱՀԿ-ի կամայականություններին վերջ տալու գործով. «Այլապես էջմիածնի ԴԱՀԿ-ին եթե կարգի հրավիրող չլինի, ապա ծառայությունը կշարունակի անել այն, ինչ ուզում է եւ ում հետ ուզում է»:

Ի. Պ.

ԻՐԵՂ ՅԳԻՏԻ

Միգուցե ճիշտ կլիներ, որ խոսեր Ալիեւ Իլհամը, այլ ոչ թե Հասանով Ալին

Հուլիսի 20-ին ՀՀ նախագահը իր նստավայրում հրավիրել էր միգրացիոն քաղաքականության վերաբերյալ խորհրդակցություն, որի ընթացքում մասնավորապես ասաց, թե Հայաստանի միգրացիոն խնդիրները, ընդ որում, բազմիցս չափազանցված, դարձել են լայն շրջանառման թեմա Ադրբեջանում: Բացի դրանից՝ Սերժ Սարգսյանը ընդգծեց, որ ի տարբերություն Ադրբեջանի, որտեղ բացակայում են ազատ խոսքն ու սուր ընդդիմությունը, Հայաստանում վերջինս ձեռքբերումների շարքից է: Եվ ահա երեկ, հարեւան երկրի նախագահի աշխատակազմի հասարակական-քաղաքական բաժնի պետ Ալի Հասանովը «Թրենդ»-ի մոջոցով որոշել է պատասխանել ՀՀ նախագահին: Միանգամից նշենք, որ հենց Ադրբեջանի համար ավելի լավ կլիներ, եթե խոսեր Իլհամ Ալիեւն ինքը, քանի որ Հասանով Ալին բացահայտ շփոթում է իրադարձությունների մասնակիցներին: Ալիեւը գոնե նման զավեշտներով հանդես չէր գա՝ ի պատշոնե

Ինչեւէ, մեջբերենք Հասանովի միտքը. «Ադրբեջանում տիրող իրավիճակը՝ ազատ խոսքի եւ ընդդիմության մասով, գնահատվում է ամբողջ աշխարհի կողմից: Ի տարբերություն Հայաստանի՝ Ադրբեջանում քաղաքական ընդդիմությունը չի գնդակահարվում խորհրդարանում: Նմանատիպ իրադարձություններով հարուստ Հայաստանը չպետք է իրեն համեմատի Ադրբեջանի հետ: Օտար երկրները բազմիցս են մեր երկիրը համեմատել հետխորհրդային երկրների հետ եւ մշտապես նախապատվությունը տվել են Ադրբեջանին՝ ի տարբերություն Հայաստանի»:

Փաստորեն, որքա՞ն բան չգիտի Ադրբեջանի նախագահի աշխատակազմի քաղաքական-հասարակական բաժնի պետը: Նախ՝ Հայաստանի նորանկախ պատմությունում չի եղել մի դեպք, երբ «քաղաքական ընդդիմությունը գնդակահարվի խորհրդարանում», եթե Հասանովը նկատի ունի 1999-ի հոկտեմբերի 27-ը, ապա այդ ժամանակ ոճրագործությունից զոհ դարձան երկրի քաղաքական վերնախավի, իշխանության ներկայացուցիչները, ոչ թե ընդդիմության: Երկրորդ՝ Հասանովը հավանաբար մոռանում է, կամ միգուցե չգիտի, որ վերջերս Բաքվի այգիներից մեկում ոստիկանությունը ձերբակալեց մի աղջնակի, որն ընդամենը բղավում էր՝ «Ազատություն», իսկ այս ամենը ցուցադրվեց միջազգային հեռուստաընկերությունների եթերում: Հետխորհրդային երկիր է նաեւ Լիտվան կամ Էստոնիան, էլ չենք ասում՝ Վրաստանը, որոնցից յուրաքանչյուրը հաստատապես ավելի հեռու «ճանապարհահատվածում է»՝ ի տարբերություն Ադրբեջանի՝ ժողովրդավարության առումով: Նման օրինակները բազմաթիվ են: «Հորից ժառանգած իշխանություն», «Կոռումպացված երկիր», «Վախեցած հասարակություն», այս վերնագրերով ու ուղղություններով հրապարակումներն ու անդրադարձերը համաշխարհային ԶԼՄ-ներում՝ Ադրբեջանի մասին, բազմաթիվ են: Ի դեպ, հենց երեկ համաշխարհային բանկից հայտարարեցին, որ իրենք մտահոգված են Ադրբեջանին տրված 1 մլն դոլարով, որը բանկը տրամադրել է «Ադրբեջանում հակակոռուպցիոն արշավին» աջակցելու համար: Միգուցե Հասանով Ալին գիտի՞, թե որտեղ են այդ փողերը, երեւի երկրում «ժողովրդավարությանը նպաստող» նոր գործընթաց են սկսել, իսկ ավելի ճիշտ՝ Ադրբեջանը «բոլոր առումներով Հայաստանից առաջ մղող»-ներին պետք է կերակրե՞լ...:

Հ. ԱՓՅԱՆ

Եվրոխորհրդարանականների տարօրինակությունները

1-ին էջից

Չէ՞ որ Հայաստանում էլ նրանց կարող են ասել, որ Լեռնային Ղարաբաղն ու նրա շրջակայքի տարածքները պատմական հայկական են եւ ենթակա չեն որեւէ այլ, բացի ՀՀ մաս կազմելու կարգավիճակի: Եվ դա կլինի միանգամայն արդարացի ու հիմնավորված: Առնվազն այնքանով, քանի դեռ Իլհամ Ալիեւը կշարունակի Լեռնային Ղարաբաղը տեսնել «Ադրբեջանի կենտրոնում»:

Երկրորդ «երկաթե առարկությունը», որ Իլհամ Ալիեւը բերել է «անկախության դեմ», այն է, որ «Լեռնային Ղարաբաղը վերածվել է կատարյալ մոնոէթնիկ ստրուկտուրայի, այնտեղ ոչ մի ադրբեջանցի չի ապրում»:

Սկսենք նրանից, որ Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցիներ ապրում են, նույնիսկ ծառայում ԼՂՀ պաշտպանության բանակում: Երկրորդ, Ադրբեջանում հայեր չեն ապրում, գրեթե եռակի-քառակի նվազել է ռուսների թվաքանակը: Վերջերս «Ենի մուսավաթ»-ը գրել էր Իսմայիլիի շրջանի Իվանովկա ռուսական գյուղի դատարկման մասին: Ադրբեջանը գրեթե լիովին լքել են հրեաները: Ոտնահարվում են քրդերի, թալիշների, լեզգիների, իսլամադավան վրացիների իրավունքները: Բայց դա չի խանգարում, որ Ադրբեջանը ճանաչվի անկախ եւ նույնիսկ անդամակցի ԵՄ-ին:

Ինչ վերաբերում է ԼՂ-ում «իրականացված էթնիկ զտումներին», ապա իրավիճակի միակ պատասխանատուն դարձյալ Ադրբեջանն է: Ադրբեջանական բանակն է օկուպացրել եւ ավերել Մարտակերտի շրջանի Լեւոնարխ ռուսական եւ Մեհմանա հունական գյուղերը, որոնց բնակիչները գրվել են աշխարհով մեկ: Բաքվի իշխանություններն են ԼՂ-ի հայ մեծամասնության դեմ սանձազերծած ագրեսիայից առաջ տարհանել բոլոր ադրբեջանական բնակավայրերի խաղաղ բնակիչներին: Դա հանրահայտ իրողություն է, որից Իլհամ Ալիեւը խուսափել չի կարող:

Իսկ եվրոխորհրդականները, փոխանակ լուռումունջ լսելու նրա «փաստարկները», կարող էին իրենց կարգավիճակը հարգել եւ գոնե դիվանագիտորեն հասկացնել, որ «լիկբեզ անցնելու» չեն եկել, այլ պարզելու, թե ինչու Ադրբեջանում մարդու տարրական իրավունքներն իսկ չեն հարգվում: Իսկ գուցե հարցրե՞լ են: Հնարավոր է: Այլապես ինչո՞ւ պիտի իրեն ընդդիմադիր կուսակցության առաջնորդ համարող Սարդար Ջալալօղլուն ասեր, որ «Ադրբեջանում ժողովրդավարություն չլինելու համար մեղավոր է Հայաստանը»:

Անցուդարձ

Գիտության պետական կոմիտեի նախագահ **Սամվել Հարությունյանը** բազային ֆինանսավորում ստացող գիտական հիմնարկներում ադրիլ-մայիս ամիսներին մոնիտորինգ էր կատարել՝ համակարգում առկա բացթողումներն ու ֆինանսական խախտումները վերհանելու նպատակով: Գիտտեկոմի նախագահի ներկայացմամբ՝ ուսումնասիրություններն իրականացվել են 3 կազմակերպություններում՝ բյուջեից ֆինանսավորվող 6 ծրագրերի մասով: Դրանցից 4-ը՝ ԵՊՀ-ում, մեկը՝ ԿԳՆ-ի բժշկաէկոլոգիական միջազգային հետազոտական ուսումնական կենտրոնում եւ վերջինը՝ Բյուրականի աստղադիտարանում:

Սամվել Հարությունյանի փոխանցմամբ՝ մոնիտորինգի արդյունքները մտահոգիչ են, որովհետեւ արձանագրվել են իրավական բնույթի բացթողումներ: Ֆինանսական բնույթի խախտումներ Գիտտեկոմը հայտնաբերել է երկու կառույցում՝ Բյուրականի աստղադիտարանում եւ բժշկաէկոլոգիական միջազգային հետազոտական կենտրոնում: Բյուրականի աստղադիտարանում Գիտտեկոմն արձանագրել էր 5 միլիոն դրամի ֆինանսական խախտում: Մինչդեռ Բյուրականի աստղադիտարանի տնօրեն **Հայկ Հարությունյանը** հակառակն է պնդում. «Ֆինանսական խոշոր խախտումներ չեն եղել»:

Անցյալ տարի հայ-ֆրանսիական համագործակցության արդյունքում աստղադիտարանի հաշվին փոխանցված 6 միլիոն դրամից տնօրենությունը վճարել է էլեկտրականության պարտքն ու աշխատակիցների աշխատավարձը: Հարությունյանն ընդգծում է, որ վճարումները պետք է կատարվեին պետբյուջեից աստղադիտարանին հատկացված գումարներից, սակայն դրանք, որպես կանոն, մեծ ուշացումներով են տեղ հասնում:

«Ըստ Գիտտեկոմի՝ հայ-ֆրանսիական համագործակցության համար ստացած գումարներից նպատակային ծախսվել է 1 միլիոն դրամը, իսկ 5 միլիոնը ծախսվել է ոչ նպատակային: Սակայն ստուգումների ժամանակ ծախսած գումարի տեղը պետբյուջեի հատկացումներից գումար էինք դրել՝ վերականգնելով բացը», ասում է Հարությունյանը՝ հավաստիացնելով, որ աստղադիտարանի եւ Գիտտեկոմի միջեւ երբեւէ տարաձայնություններ չեն եղել: Միաժամանակ Հարությունյանը չի բացառում, որ անհիմն մեղադրանքները աստղադիտարանի հանդեպ որոշակի բացասական տրամադրության արտահայտություն են:

Աստղագետները չեն թաքցնում՝ եկամտի հիմնական աղբյուրը միջազգային գրանտներն են:

Աստղադիտարանի աշխատակիցների միջին տարիքն էլ 50-ն է, ամենաբարձրը՝ 80-ը: «Կան մինչեւ 33 տարեկան գիտաշխատողներ, սակայն 33-50 տարեկան մասնագետները, ովքեր արդեն փորձառու են եւ իրենց փորձը պետք է փոխանցեն երիտասարդներին, իսպառ բացակայում են»: Մեղավորը 90-ականներն էին: Երիտասարդ գիտնականներից շատերը լքեցին հայրենիքն ու այժմ ճանաչված գիտնականներ են արտասահմանում, մի մասն էլ գիտությունից հրաժարվեց եւ անցավ բիզնեսին»:

Պետության անտարբերության եւս մեկ փաստ է արձանագրում Հայկական աստղագիտական ընկերության համանախագահ **Արեգ Միքայելյանը:** «Միայն այս տարի պետական ֆինանսավորում ստացող 110 դրամաշնորհներից որեւէ մեկը բաժին չի հասել աստղադիտարանին, այն պարագայում, երբ 6-7 թեմա վերաբերում էր աստղագիտությանը: Համեմատության համար՝ «Անսեֆ» հիմնադրամի 25 գրանտերից 4-ը բաժին է հասել հայ աստղագետներին, հայ-ֆրանսիական 10 դրամաշնորհից՝ 3-ը: Ստացվում է, որ միջազգային կազմակերպությունների չափանիշներով մենք ունենք լավ աշխատողներ եւ լավ աշխատանք, իսկ հայաստանյան չափանիշերով՝ ոչ»:

Հ. Հ.

Ոչ թե ֆինանսական խախտում, այլ էլեկտրաէներգիայի պարտքի մարում

Բյուրականի աստղադիտարանի պատասխանը Գիտտեկոմին

«Եթե պատկան մարմինները կարծում են, որ մենք որեւէ արժեք չենք ներկայացնում, թող այդպես էլ ասեն: Ստուգումների ժամանակ միշտ զարմանում են, թե ինչպես են մարդիկ ցածր աշխատավարձով աշխատում աստղադիտարանում», ասում է Հարությունյանը պետության վերաբերմունքը աստղադիտարանի հանդեպ բնութագրելով «անտարբեր բարյացակամ»:

Հարությունյանի խոսքերով՝ այդ անտարբերությունը դրսեւորվել է դեռեւս անկախության առաջին տարիներից: «Երբ այլ կառույցների աշխատողները ընդհանուր թվի երկու գործակցով կրճատվեցին, աստղադիտարանում կրճատվեցին 5 տոկոսով»: Այսօր աստղադիտարանում աշխատողների թիվը 86 է: Թեպետ նախագահն ու վարչապետը անընդհատ շեշտում են գիտելիքահենք տնտեսության կարեւորությունը, աստղադիտարանի աշխատակիցների միջին աշխատավարձը 36.000 դրամ է, տնօրենինը՝ 58.000 դրամ:

Կոչ քաղաքապետին. «Մի պակասեցրեք մեր կենսական լույսը»

Կոմիտասի 5ա հասցեի բնակիչների խնդիրներին «**Ազգ**» օրաթերթը բազմիցս անդրադարձել է: Վերոնշյալ հասցեում քաղաքապետարանի թույլտվությամբ՝ ներկա էլեկտրատանսպորտի քարշի ենթակայանը տեղափոխվում է բակի հարեւանությամբ այգին, իսկ ենթակայանի տեղում կառուցվում 14-հարկանի բազմաբնակարան շենք: Խնդիրը քննարկվել է ներկա եւ նախկին քաղաքապետների օրոք, բնակիչները մի քանի անգամ բողոքի ակցիա են կազմակերպել, սակայն արդեն մեկ տարի խնդիրը լուծում չի ստանում:

Բազմաբնակարան շենքն ու քարշը այդ փոքր տարածքում կառուցելը ոչ միայն աննպատակահարմար է, այլեւ շինարարական նորմերի խախտում: Թեպետ շենքի լայնությունը շուրջ 200 քմ կրճատվել է, սակայն երկայնքով մեծացել է շուրջ 1 մետրով, ինչը ավելի է վատթարացնում բնակիչների բնակարանների լուսավորությունը:

Բնակիչների՝ քաղաքապետին արված բազմաթիվ հարցումները՝ տրամադրել օտարման գոտու կամ շինհրապարակի գծագիրը, մնացել են անպատասխան: Քաղաքապետարանից եկած նամակներից մեկում քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության եւ շինարարության վարչության պետ Քասարյանը պատասխանել է. «Տարածքը ի սկզբանե առանձնացված եւ պարսպապատված էր, որից ելնելով շինարարության կազմակերպման լրացուցիչ տարածքի ժամանակավոր տրամադրում եւ ցանկապատում չի նախատեսվում»: Մինչդեռ ցանկապատված տարածքը ծառապատ էր եւ գործող կանոններով չէր կարող ներառվել շինհրապարակի կամ օտարման գոտու մեջ:

Չի պահպանվում նաեւ ենթակայանի եւ բազմաբնակարան շենքերի միջեւ օրենքով սահմանված 10 մ հեռավորությունը: Այդ պարագայում ոչ միայն ենթակայանը, այլեւ 14 հարկանի բազմաբնակարան շենքը խանգարում են շենքի լուսավորությանը: Բնակիչները մտահոգված են, որ ենթակայանը կարող է վնասել իրենց առողջությունը:

Նրանք պատմում են, որ շենքի բնակիչների մոտ 50-60 տոկոսը մահացել է քաղցկեղ հիվանդությունից: «Մեր շենքում ուրիշ հիվանդությունից մահ չի գրանցվել»: Այժմ բնակիչները ավելի են սարսափում, որ չարաբաստիկ ենթակայանը պետք է գործի հենց իրենց պատուհանների տակ:

Մի քանի ամիս առաջ «Լիբերտի» ՍՊԸ-ի ներկայացուցիչներն առավոտյան մտել են բակ ու հատել բակի մրգատու ծառերն ու խաղողի վազերը:

Կատարվածի առնչությամբ բնակիչները դիմել են գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին: Գործը քննության է ուղարկվել Արաբկիր-Զեյթուն շրջանի դատախազություն:

Այսօր Կոմիտասի 5ա հասցեի բնակիչները մոտ 120 ստորագրությամբ նամակ-պահանջը կհանձնեն քաղաքապետ Կարեն Կարապետյանին: Նամակում շենքի բնակիչները ներկայացրել են, բոլոր այն անօրինական որոշումները, որոնք կատարվել են նախկին քաղաքապետի օրոք, քաղաքաշինական, առողջապահական եւ բնապահպանական բազմաթիվ նորմերի խախտումները՝ ակնկալելով, որ քաղաքապետն ուշադրություն կդարձնի իրենց խնդրին: «Ինչպե՞ս պաշտպանվենք պետական մարմինների աղօրինություններից, որոնք պատրաստվում են փակել մեր եւ մեր երեխաների արեւը, ասելով, որ ինչ-ինչ նորմերի համաձայն օրական 12 ժամ արեւի փոխարեն մեզ բավարար է 2.5 ժամ: Ինչպե՞ս վարվենք, եթե մեր տան շրջակա ծառերը հատվում են, այն էլ Կոմիտասի նման փոշոտ եւ էկոլոգիապես անբարենպաստ թաղամասում»: Նամակում քաղաքացիները անհանգստություն են հայտնում, թե նոր կառուցվող շենքի բնակիչները որտե՞ղ են կանգնեցնելու իրենց ավտոմեքենաները, կամ նրանց ավտոմեքենաներն ինչպե՞ս են մուտք ու ելք անելու: Այդ իմաստով նոր կառուցվող շենքը դառնալու է մշտական խցանումների պատճառ: Քաղաքացիները պահանջում են չեղյալ համարել նախորդ քաղաքապետի ստորագրած շինթույլտվությունն ու սեփականատիրոջը՝ Քեշիշ Աբրամին հատկացնել կառուցապատման համար բարենպաստ տարածք, ենթակայանի հաստ պարիսպը վերացնել ու շրջակայքը կրկին վերածել հանգստի գոտու:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԻՍՏՈՒՄ

Հայտնաբերվեցին 350-400 երեխաներ

Որոնք ստացան ծննդյան վկայականներ

Վարչական ռեգիստրում մինչեւ 16 տարեկան երեխաների գրանցման մասին խոսելով՝ տարածքային կառավարման փոխնախարար **Վաչե Տերտերյանը** երեկ հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց, որ հայտնաբերվեցին 350-400 երեխաներ, որոնք չունեին ծննդյան վկայականներ եւ ստացան դրանք: Մինչ այդ փոխնախարարը ներկայացրեց այս տարվա առաջին կիսամյակի նախարարության գործունեության հաշվետվության հիմնական ցուցանիշները:

Ըստ Վաչե Տերտերյանի՝ այս տարի համայնքային բյուջեների կատարողականը բարելավվել է: 2011-ի հուլիսի 1-ի դրությամբ համայնքները հավաքել են 10,4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 85,9 տոկոսը: Նախորդ տարվա համեմատ եկամուտներն ավելացել են 6,6 տոկոսով: Այդուհանդերձ, համայնքները շարունակում են մեծաթիվ գոյատեւել պետական բյուջեով նախատեսված դոտացիայի շնորհիվ: Սեփական եկամուտները կազմում են ընդհանուրի 24,6 տոկոսը: Այս ցուցանիշը բարելավելու խնդիր կա եւ պետք է տարեցտարի ավելացնել հողի հարկի, գույքի հարկի, վարձակալության վճարների, տեղական տուրքերի վճարումների հավաքման մակարդակը: Տարածքային կառավարման փոխնախարարը որպես համայնքային բյուջեների համալրման աղբյուր նշեց հողերի կատեգորիաների փոփոխությունը, որի շնորհիվ հանրադյունաբերական հողերից համայնքները ստացել են էական գումարներ:

Վաչե Տերտերյանին հարցեր ուղղվեցին նաեւ Լոռու նախկին մարզպետ Արամ Քոչարյանի՝ պաշտոնից հրաժարվելու, Գավառի քաղաքապետի նկատմամբ գլխավոր դատախազի՝ կառավարությանն ուղղված դիմումի եւ Արարատի նախկին մարզպետի դեմ ներկայացված քրեական մեղադրանքի վերաբերյալ, որոնց փոխնախարարը չցանկացավ իրավական պատասխաններ տալ, ասելով, որ գնահատականներ կարելի է տալ միայն իրավական որոշումներից հետո:

Ա. Մ.

Վարչապետը հանձնարարել է ուշադրության կենտրոնում պահել Սանահինի խնդիրը

Կառավարության հերթական նիստի ժամանակ վարչապետ **Տիգրան Սարգսյանն** անդրադարձել է Սանահինի վանական համալիրի խնդրին՝ պահանջելով մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանից՝ ուշադրության կենտրոնում պահել խնդիրը: Ներկայացնելով, թե մեկ տարվա ընթացքում նախարարությունն ինչ աշխատանք է իրականացրել (Սանահինի վանական համալիրում նախարարության ներկայացրած աշխատանքներին եւ համալիրի խնդիրներին «**Ազգ**»-ն անդրադարձել է նախորդ համարում-Հ.Հ.), **Հասմիկ Պողոսյանը** նշել է, որ առաջիկայում Սանահինում կմեկնարկեն հնագիտական պեղումները: Նախարարը որոշումը բացատրել է, որ անհրաժեշտ է ուսումնասիրել գրունտի վիճակը եւ հասկանալ, թե ինչ տեխնիկական խնդիրներ են առկա հուշարձանի հանույթի հետ կապված:

«Այս ամենի արդյունքում կկազմվի համալիրի վերականգնման նախագծի տեխնիկական առաջադրանքը, որը լուծելու է հուշարձանի հետ կապված բոլոր՝ ճաքի, գմբեթի, հուշարձանի երեք հատվածների խնդիրները: Լուծում կտրվի Սանահինի տարածքում աճող բույսերը ֆիզիկաքիմիական նյութերով մշակելու խնդրին: Նախագծի համար պետական բյուջեով նախատեսվել է 6 մլն դրամ գումար, նախագծային առաջադրանքի հիման վրա կհայտարարվի բաց մրցույթ: Նախագիծը կկազմվի եւ 2012 թ.-ից ՄԺԾԾ-ով հատատված 90 մլն դրամ գումարի շրջանակներում կսկսենք վերականգնման աշխատանքները», ասել է նախարարը՝ հավելելով, որ մինչ այդ մշակված նախագիծը պետք է անցնի փորձաքննություն: Անդրադառնալով գերմանացի մասնագետներին, ովքեր չափագրում են եկեղեցու հարավային ճակատը, վարչապետը նախարարից հետաքրքրվել է, թե ինչպիսի՞ն է նրանց եզրակացությունը. արդյոք համալիրին վտանգ սպառնո՞ւմ է:

«Ճաքը աճում է, թե ոչ, պատասխան կտա հսկիչ հետազոտությունը: Նախնական տվյալներով՝ այնքան ճաքի մեջ չէ խնդիրը, որքան ճաքի հիմքերի: Դրա համար ենք հնագիտական հետազոտություն կատարում՝ հասկանալու, թե ինչքան խորն է ճաքը գնում: Ենթադրվում է, որ ճաքը նստած է այն հատվածների վրա, որտեղ կան սողանքներ, եւ դա է առաջացնում հիմնական խնդիրը: Համապարփակ այդ եզրակացությունը կլինի երկու վերջնական հետազոտությունների հիման վրա: Սեպտեմբերին մենք կունենանք այդ վերջնական եզրակացությունը», եզրափակել է Հասմիկ Պողոսյանը:

Հ. Հ.

ԱԶԳ

Խորհուրդ

Երկար ատենէ ի վեր կը խօսուէր ու կը ծրագրուէր Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ. կաթողիկոսի վրայ ու հայ համայնքներուն հովուապետական պետական այց տալու պատմական ծրագիրը: Պատմական՝ մանաւանդ այն իմաստով, որ այդ այցը առաջինը պիտի ըլլար դար մը առաջ Խրիմեան Հայրիկի կատարած այցէն ի վեր: Բազմիցս ձգձգուելէ ետ վերջապէս այդ այցը կայացաւ անցեալ ամիս՝ հրաւէրովը վրայ Պատրիարք Իլիա Բ.ի, որ վրացական ազգայնամոլութիւնը մարմնացնող հոգեւորական մըն է: Ինչ խօսք որ մայրաքաղաք Թբիլիսիի եւ Ջաւախքի մէջ հայ հաւատացեալ ժողովուրդը ջերմ ու խանդավառ ընդունելութեան մը արժանացուց իր հովուապետը: Սակայն վրաց պատրիարքը, իբրեւ «տանուտէր» եւ հիւրընկալ, միշտ իր անձը պարտադրեց ամբողջ այցելութեան տեւողութեան՝ կերպով մը պատուիր հանդիսանալով Հայոց Հայրապետին եւ իր հօտին միջեւ:

Յայտնի էր որ վրաց եկեղեցին ամէն սադրանք պատրաստելէ վերջ էր, որ ընթացք տուած էր Հայոց Հայրապետի հրաւէրին: Արդարեւ, հովուապետի այցի ընթացքին յանկարծ հրապարակ ելաւ անվաւեր եւ անստորագիր «Միացեալ հաղորդագրութիւն» մը, ուր իբր թէ երկու հոգեւոր պետերը կը պայմանաւորուէին վրաց եկեղեցիին ընծայել միեւնոյն իրաւունքները Հայաստանի մէջ, ինչ որ հայկական եկեղեցին պիտի ունենար Վրաստանի մէջ: Մայր աթոռը որոշ ուշացումով հերքեց նման «Միացեալ հաղորդագրութեան մը» վաւերականութիւնը, թէեւ այդ փաստաթուղթը ուրիշ բան չէր՝ եթէ ոչ վրաց կաթողիկոսի մէկ ցանկաստեսութիւնը, որուն համար ալ մինչեւ այսօր կը պայքարի ան: Մինչեւ հայոց վեհափառի այցը Վրաստան, հայկական կողմը կատարած էր իր լոբբիստական աշխատանքը այն պետութեանց մօտ, որոնք միշտ պատրաստ են Հայաստանը մեղադրելու իբրեւ մարդու ազատութիւնները կաշկանդող երկիր, մինչդեռ ամէն կարգի գոյնզգոյն աղանդներ պաշտօնաթէս արձանագրուած ըլլալով Հայաստանի մէջ՝ աւերներ կը գործեն, նախ գործելով Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ դէմ եւ թափանցելով բանակէն ներս, կը քարոզեն զինաթափել հայ զինուորները թշնամիին դիմաց:

Մինչդեռ Վրաստան կ'ընդդիմանար կրօնական ազատութիւն շնորհելու՝ իր տարածքին վրայ ապրող այլ ազգութեանց եւ դաւանանքներու: Հաւանաբար արտաքին քաղաքական ճնշումի տակ նախագահ Միխայիլ Սաակաշվիլի կը խոստանար հայոց հայրապետին շուտով ընդունիլ օրէնքը, որմէ կրնային օգտուիլ նաեւ հայերը: Այս իմաստով յաջող էր Ամենայն հայոց հայրապետին հանդիպումը Վրաստանի նախագահին հետ:

5 յուլիսին Վրաստանի խորհրդարանը ընդունեց երկրին քաղաքացիական օրենսգիրքին մէջ առաջարկուած փոփոխութիւնները, որով հնարաւոր կը դառնայ գրանցել տարբեր կրօնական համայնքները ոչ որպէս ոչ կառավարական (NGO) կազմակերպութիւններ, այլ իբրեւ հանրային իրաւունքի առարկաներ՝ իրաւական անձի կարգավիճակով: Այս վերջին փոփոխութեամբ իրաւական անձի կարգավիճակ կրնան ստանալ Հայ առաքելական եկեղեցին, Հռոմէական կաթոլիկ եկեղեցին, Մկրտականները (Baptists), իսլամները ու հրեաները: Այս նոր օրինագիծը խուճապի մատնած է Վրաց եկեղեցին, սկսելով իր պատրիարք Իլիա Բ.էն, որ կիրակնօրեայ պատարագի ընթացքին անիծած է բոլոր այն երեսփոխանները, որոնք ի նպաստ քուէարկած են նոր օրէնքին. ի դէպ մեծամասնական իշխող կուսակցութիւնն է, որ նախաձեռնած է այս փոփոխութեան՝ լաւ իմանալով անոր արձագանգը Արեւմուտքի մէջ, աւելի քան մտահոգութիւնը ունենալու փոքրամասնութիւնները գոհացնելու, իսկ օրինագիծին դէմ քուէարկած են 65 ընդդիմադիր քրիստոնեայ դեմոկրատները: Իլիա պատրիարքը «անսպասելի» հռչակած է խորհրդարանական այս նախաձեռնութիւնը:

Իսկ Վրաստանի կրօնական Սինոսը, իր կարգին նիստ մը գումարելով «ընդհանուր դժգոհութիւն յայտնած է օրէնսդրական փոփոխութեան» նկատմամբ նշելով, որ վրաց եկեղեցիին եւ հանրութեան հետ խորհրդակցութիւն չէ կայացած օրէնսդրական քայլը առնելէ առաջ: Ըստ պատրիարքարանի ներկայացուցիչներուն «թաքուն սպառնալիք» մը գոյութիւն ունի այս օրէնսդրական քայլին եւեթ», որովհետեւ ըստ անոնց «հայկական կողմը կը յայտարարէ, թէ իրեն կը պատկանին Վրաստանի տարածքին գտնուող 600 եկեղեցիներ, որոնց վեցը կը պահանջուի անմիջապէս վերադարձնել»: Իսկ ծայրայեղական վրացիներ շղթայ կազմած են հայերէն յափշտակուած եկեղեցիներու շուրջ, մերժելով զանոնք վերադարձնել իրենց օրինաւոր տիրոջ: Ջաւեշականը այն է, որ այս նոր օրէնքով 2000 իսլամական մզկիթներ օրինաւոր ձեւով պիտի արձանագրուին ազերիներու եւ թուրքերու անուան, առանց աղմուկի, իսկ մեր քրիստոնեայ «եղբայրները» Վրաստանի մէջ պատերազմ յայտարարած են արդէն քրիստոնեայ հայերու դէմ:

Օրէնքները ընդունիլը մէկ բան, անոր կիրարկութիւնը՝ բոլորովին ուրիշ բան: Սաակաշվիլիի վարչակարգը շատ ալ գիտակից է իր ըրածին, որ ուրիշ բան չէ եթէ ոչ փոշի ցանել արեւմտեան իշխանութեանց աչքին եւ հազար ու մէկ խաղերով շարունակել իրաւազրկել հայկական կողմը: Արդէն պաշտօնական բերաններ այդ ուղղութեամբ ըրած են կարգ մը վճռական արտայայտութիւններ: Այսպէս Թբիլիսիի քաղաքապետ Գիգի Ուգուլաւան պատրիարքարանին մէջ յայտարարած է, թէ օրակարգի վրայ չկայ որեւէ հարց կրօնական համայնքներուն ունեցուածք վերադարձնելու: Իսկ վարչապետ Նիքա Գիլաուրին յայտարարած է, որ «Վրաց կառավարութիւնը բնաւ ալ մտադիր չէ քննարկելու որեւէ մէկուն զիջելու ուղղափառ եկեղեցիին ունեցուածքը»: Ներկայիս վիճայարոյց եկեղեցական շէնքեր նկատուած են 5 հատ Թբիլիսիի մէջ եւ մէկ հատ ալ՝ Ախալքալաքի մէջ: Այս 6 եկեղեցիներն ալ կը գտնուին Վրաստանի պետական իշխանութեանց տնօրինութեան տակ եւ ենթակայ չեն Վրաց ուղղափառ եկեղեցիին: Ժամանակը միայն ցոյց պիտի տայ, թէ պետութիւն եկեղեցի ներկայ տարակարծութիւնը որքանով իրական է եւ որքան՝ երեւութական, երբ ժամանակը գայ յափշտակուած հայկական եկեղեցիներու ճակատագիրը տնօրինելու:

Հայ առաքելական եկեղեցւոյ Վրաստանի առաջնորդը՝ Վազգէն եպիսկոպոս Միրզախանեան, անդրադառնալով հարցի կիզակէտին՝ յայտարարած է. «Վրացական օրէնսդիրներու այս քայլը կը լուծէ միայն Հայ եկեղեցւոյ կարգավիճակ տալու հարցը, սակայն անոր պիտի հետեւին այլ հարցեր, որոնք տասնամեակներէ ի վեր լուծման կը սպասեն: Յաջորդ քայլը կանոնադրութեան ներկայացմամբ Հայց. եկեղեցիի գրանցումն է եւ ապա՝ կառավարութեան մօտ դիմումը հայկական եկեղեցիները վերադարձնելու եւ ապա կը մնայ լուծել սեփականաշնորհման հարցը»: Ինչպէս կը տեսնուի, քրիստոնեայ Վրաստանը այնքան ալ տարբեր չէ իսլամ Ազրբէյջանէն, որ վերջերս բնաջնջեց տասնեակ հազարաւոր հայկական խաչքարեր, որոնց ինք չուզէր կարիքը, ոչ ալ՝ աշխարհի մշակութային ժառանգութեան համար կարեւոր նկատեց զանոնք: Իսկ քրիստոնեայ Վրաստանը, որ ուժն ունի յափշտակելու հայոց եկեղեցիները, որոշած է օր ցերեկով իւրացնել զանոնք:

Նորին արքութիւնն ու Նորին լրքութիւնը Վրաստանի մէջ դէմ դիմաց

ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆ

Ամենայն Հայոց Հայրապետին այցը Վրաստան աւելորդ անգամ մը եւս հաստատեց, թէ վրացիներու ազգայնամոլութեան, անհանդուրժողութեան եւ այլատեացութեան խորհրդանիշը կը մնայ իրենց պատրիարքը՝ Իլիա Բ., որ բաւական անբարեկիրթ ընթացք մը ցոյց տուաւ, չըսելու համար՝ անկիրթ, Վեհափառի ամբողջ այցելութեան ընթացքին: Իսկ անոր մեկնումէն վերջ ալ իր «տարիներու բարձունք»էն ձրի խրատներ բաշխեց Հայոց հայրապետին, թէ ան տակաւին երիտասարդ է, եւ պէտք ունի հասունանալու վրաց անլուծելի խնդիրները հասկնալու համար: Իսկ յուլիսի սկիզբները վրաց կողմը կատարած է աւելի անվայել արարք մը՝ համացանցի վրայ սփռելով գաղտնի նկարահանուած տեսերիզ մը, Հայոց հայրապետը ցոյց տալով աննպաստ լոյսի տակ: Տեսերիզը ցոյց կու տայ մտերիմ խօսակցութիւն մը երկու հովուապետներուն միջեւ, ուր հայոց կաթողիկոսը դիտել կու տայ, որ վրաց պատրիարքը ըսած է բան մը եւ հրապարակով ըրած է ճիշդ հակառակը: Այստեղ եւս վրաց կաթողիկոսը հանդէս կու գայ խրատատուի դերով իր «տարիներու բարձունքէն»: Հակառակ որ էջմիածնի կողմէ յայտարարուեցաւ, թէ սոյն տեսերիզը «մոնտաժուած» է, այսինքն խեղաթիւրուած, «Առաւօտ» օրաթերթի նման լուրջ թերթի մը խմբագիրը՝ Արամ Աբրահամեան, առիթը գտած է այդ տեսերիզի հիման վրայ Ամենայն հայոց հայրապետը անարգելու իբրեւ «տգէտ», փոխանակ անոր այցով իրականացած օրէնսդրական յաջողութիւնը նշելու, փոխարենը նաեւ ջուր հայթայթելով վրաց աթոռիին ջրաղացին:

Վերադառնալով վրաց Իլիա Բ. պատրիարքի անվայել ընթացքին՝ պարզ է թէ վրացահայութիւնը դեռ երկար ատեն պիտի մնայ իրաւազրկութեան մէջ: Իսկ ինչ կը վերաբերի անոր ձրի խրատականներուն՝ նեռելի պիտի ըլլան անոնք եթէ պարզուի թէ «տարիներու բարձունքը» փիչ մը ջրտած է պատրիարքին ուղեղը, հակառակ պարագային՝ թող նեռուի մեզի հաստատելու, թէ անոնք պիտի մնան պաշտօնական հաստատումները Վրաց Նորին Լրբութեան...:

Դեսրոյթ, ԱՄՆ

ՇՈՒՔԱՐՇԱՎ

«Արմենիա»-ն Չեխովի հյուրն է

ՀԱՍՊԻՐ ԲԱԼԱՅԱՆ
Հնդկական օվկիանոս

Ստեփանակերտ: Թիվ մեկ հայկական դպրոց: Առաջին դասարան: Նոր, 1943 թվականն է: Հիշում եմ, դպրոցում (այդ շենքում հիմա արցախյան պառլամենտն է գործում) ցերեկույթ անցկացրինք միջանցքում տեղադրված տոնածառի մոտ: Երգում էինք, պարում, բանաստեղծություններ արտասանում: Ջմեռ պապը ցածր դասարանների աշակերտներին կոնֆետներ նվիրեց, իսկ ավագներին՝ գեղեցիկ գրքեր: Հիշում եմ նաեւ, որ մեզնից ոչ մեկը չհամարձակվեց կոնֆետ վայելել: Տարանք տուն: Քույրերի ու եղբայրների հետ կիսելու մեր նվերները: Իսկ մինչ այդ ուրախանում էինք տոնածառի շուրջը, դուսեւորում երգ ու պարի, ասմունքելու մեր կարողությունը: Ես արտասանեցի Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունը: Մեր ուսուցչուհին՝ ընկեր Ադամյանը, երկու օրով ինձ էր տվել Իսահակյանի գիրքը (հետո իմացա, որ դա «Սասնա Մհերն» էր): Մի փոքրիկ



հատված անգիր էի արել: Երկու օր անց մեր տանը հայտնի դարձավ (ինչ-որ մեկը իմ Մարկոս պապին տեղեկացրել էր), որ իմ եւ էլի երկու համադասարանցիներիս պատճառով մարդիկ են տուժել: Ջեմ հիշում՝ թերթի՞, թե՞ ռադիոյի խմբագիրը: Պարզվեց, խստիվ արգելվում էր խորհրդային մամուլում գովաբանել ժողովրդի թշնամու երեխային եւ ընդհանրապես ընտանիքի անդամներին: Այդ ժամանակ էլ իմացա, որ նման մի բան ինձ հետ էլի էր պատահել 1940 թվականի Նոր տարուն: Այն ժամանակ մանկապարտեզում ես դեռ հինգ տարեկան էլ չկայի, բայց ոստանավոր արտասանեցի, եւ դարձյալ ինչ-որ մեկը տուժեց: Ի դեպ, ես հետո իմացա, որ այդ հարցը հետագայում շատ հետաքրքրեց: Խմբագրություններում կային ժողովրդի թշնամիների երեխաների անունները, եւ հատուկ հատիֆային աշխատողներ հետեւում էին, որ հանկարծ պատահաբար չգովեին նրանց:

Ջեմ կարծում, թե այդ ամենից ես շատ ազդված էի այն ժամանակ: Նախ՝ ինձ նմանները շատ էին, երկրորդ՝ կյանքիս գլխավոր հեղինակությունը Մարկոս պապս էր, որը բացեիբաց հպարտանում էր իմ հորով: Եվ երրորդ՝ շուտով, չեմ հիշում՝ որ դասարանում էի, իմացա, որ իմ առաջին կուռքը դարձած Ավետիք Իսահակյանին Բաքվում համարում էին «վատ մարդ» եւ նույնիսկ վիրավորված էին, որ Վարպետը Ստեփանակերտ էր եկել առանց իրենց թույլտվության: Ես հիշում եմ՝ ինչպես էին բարկացել մեծերը: Եվ ամենից շատ՝ Բագրատ Ուլուբաբյանը: Այն ժամանակ մենք առաջին անգամ էինք լսում այդ անունը: Ղարաբաղյան շարժման ապագա առաջնորդի անունը:

Եվ այսպես, մանկուց ես ունեի իմ կուռքը: Կարդում էի նրա բանաստեղծությունները: Մեջբերումներ էի անում: Գիտեի նույնիսկ, որ նրա կինը մեր Շուշիից էր: Բայց ահա անցան տարիներ: Եվ ինչպիսի տարիներ. աղմկոտ, կատաղի, սառնամանիքային, քնարական, սովորական: Եվ հանկարծ ես հասկացա, որ եւս երկու կուռք ունեմ, որոնց ոչ թե կուրորեն պաշտում եմ հեթանոս չաստծո պես (բարեբախտաբար լավ եմ յուրացրել եւ ողջ կյանքում կիրառել աստվածաշնչյան ցուցումը. «Կուռքեր մի՛ ստեղծիր քեզ համար»), այլ առանձնակի հարգանքով ու մեծարանքով եմ մոտենում առանձնահատուկ տաղանդին, որը ոգեշնչում է, պարտավորեցնում է սովորել իրենից, մերձենալ իրեն: Եվ ահա իմ Ավետիք Իսահակյանից հետո աստիճանաբար, դանդաղ բայց հաստատուն կերպով իրենց տեղերը եկան գրավելու Անտոն Չեխովը եւ Ջեկ Լոնդոնը: Բացի հանճարեղությունից, հոգեհարազատացան նաեւ այն պատճառով, որ Անտոն Պավլովիչը բժիշկ էր, իսկ Ջոն Գրիֆֆիսը (Ջեկ Լոնդոնի իսկական անունն է) ե՛ւ ծով է, ե՛ւ տունդրա, ե՛ւ նավ, ե՛ւ շնասահնակներ: Ես, իհարկե, արդեն թանկ ուրիշ բաներ եմ ունեցել, բայց այ, Իսահակյանը, Չեխովը եւ Լոնդոնը հավերժ ինձ հետ են: Կարդացել եմ, թերեւս այն ամենը, ինչ նրանք գրել են: Նույնիսկ Ավիկ Իսահակյանի հատ գրքերն եմ կարդացել՝ իր հանճարեղ պապի մասին: Բայց այսօր խոսքը միայն Չեխովի մասին է: Այսօր «Արմենիա»-ի անձնակազմը Շրի Լանկա կղզում է, որը գիտի, հիշում է եւ մեծարում է ռուս մեծ գրողին: Շրի Լանկայի մայրաքաղաք Կոլոմբոյի դրամատիկական թատրոնում սինգալերենով բեմադրվել են «Բալի այգին» եւ «Երեք քույրերը»: Նույն լեզվով էլ գրքեր եւ մի ողջ մենագրություն է հրատարակված Ցեյլոն կղզում Չեխովի գտնվելու մասին: Իրենք ասում են՝ ցեյլոնցիների բախտը լավ է բերել. Չեխովն է եղել Ցեյլոնում: Ճիշտ է, կարդալով մեծ գրողի նամակները, դժվար չէ համոզվել, որ այդ նրա բախտն էր բերել Ցեյլոնի առումով, որն իսկական դրախտ կոչեց՝ սախալինյան դժոխքից հետո: Նա այդպես էլ գրել է իր նամակներից մեկում. «Ես եղել եմ ե՛ւ դժոխքում, որպիսին ներկայացավ ինձ Սախալինը, ե՛ւ դրախտում, այսինքն՝ Ցեյլոն կղզում»:

Դպրոցական քրեստոմատիայից մենք տեղյակ ենք, որ երիտասարդ Չեխովը շատ երկար ուղի է անցել Ռուսաստանի ճանապարհազուրկ վայրերով, ճամփաբաժաններով, հազարավոր ու հազարավոր կիլոմետրեր կտրելով ե՛ւ ձիով, ե՛ւ ոտքով, ե՛ւ թաց հագուստով ու թրջված վալենկաներով: Եվ այդպես՝ մինչեւ Սախալին: Եվ այն դեպքում, երբ հիվանդ էր տուբերկուլյոզով: Դա ծանրագույն արշավ էր (մեկ հոգով անձնակազմով): Երկար ամիսներ ահռելի կղզում նա ողջ տարածքի բնակչության ամենախսկական մարդահամար կատարեց: Դժվար է հավատալ, որ մեկ մարդն ի վիճակի է այդ ամենն անել: Դե, ինչպե՞ս չնախանձես այդ մարդու բնավորությանն ու կամքին: Չէ՞ որ մի ողջ կղզու բնակիչների մասին մի քանի հազար քարտ էր հավաքել: Դա նշանակում է, որ նրանցից յուրաքանչյուրի հետ (հիմնականում՝ նախկին ատամնաբույժների) հարկ է եղել հանդիպել, զրուցել: Ես չգիտեմ, կհամաձայնեն ինձ հետ չեխովագետները, թե ոչ, բայց դեմ եմ բուն խոսակցություններին ու վեճերին այն հարցում, թե արժե՞ր արդյոք, որ Չեխովը Սախալին ուղեւորվեր: Իբր ի՞նչ տվեց դա իրեն, բացի տուբերկուլյոզի սուրից: Ոմանք պնդում են, որ նման ախտորոշման դեպքում ընդհանրապես չէր կարելի նման քայլ ձեռնարկել, այն էլ Ռուսաստանի ճանապարհների իսպառ բացակայության կամ դժվարանցանելիության պայմաններում: Ուրիշները «մեղադրում» են, որ նա հաճախ էր ճոճանակի նման տատանվում Յալթայի ու Մոսկվայի միջեւ: Երրորդները գտնում են, որ բժիշկ լինելով հանդերձ, ժամանակին չդիմեց բժիշկներին: Ոչ մի նման բան: Ամեն ինչ այլ կերպ էր: Ես անձամբ լիովին վստահ եմ, որ նա գործնականում միշտ պատրաստ էր մահվան եւ հենց այդ պատճառով էլ ցանկանում էր սեղմել ու կարճացնել կյանքի ձեւաչափերն այնպես, որ մեկ օրվա մեջ տեղավորի իր երկու եւ նույնիսկ երեք օրը: Եվ նրան միշտ անհրաժեշտ էին ցնցումներ, պայթյուններ, փոփոխություններ: Նրան մանկուց ծանոթ էր դժբախտության կանխատեսման զգացումը: Նա ընդամենը տասը տարեկան էր, երբ առաջին անգամ պարզեցին ախտորոշումը՝ տուբերկուլյոզ, եւ երիտասարդ ժամանակ տառապում էր աջ թոքի արյունահոսումից: Եվ եթե այդուհանդերձ ուղեւորվեց Սախալին, նշանակում է՝ գիտեր, թե ինչ է անում: Դա 1890 թվականին էր:

Տես էջ 8

Ի՞նչ է պատրաստ զոհաբերել Ալիեւը

Որեւեմ միջազգային հանրության կողմից ավելանում է ճնշումը ղարաբաղյան կարգավորման գործընթացում բանակցող կողմերի վրա, այնքան առավել հակասական ու ծայրահեղական են դառնում Ադրբեջանից հնչող կարծիքները: Այնուամենայնիվ, իշխանության ներկայացուցիչների կողմից օրեցօր ակտիվացող ռազմական հռետորաբանությանը զուգահեռ այս երկրի փորձագիտական շրջանակներից հնչում են կարծիքներ, որոնք ակնհայտ են դարձնում հետեւյալ հանգամանքը. ղարաբաղյան կարգավորման գործընթացում Բաքվի մաքսիմալիստական դիրքորոշումը վաղուց արդեն դուրս է եկել ազգային շահերի պաշտպանության տրամաբանությունից: Ավելին, արեւելյան տիպի այս բռնապետությունում ազգային եւ իշխող վերնախավի շահերն այնքան կտրված են միմյանցից, որ թվում է, այդ վերնախավը ոչ միայն չի խորհում իր նպատակներին ծառայեցնել ազգային շահերը, այլեւ, հարկ եղած դեպքում, պատրաստ է զոհաբերել դրանք:

«Ադրբեջանական կողմը մեկ անգամ չէ, որ խոսել է ղարաբաղյան հակամարտությունը ռազմական ճանապարհով կարգավորելու հնարավորության մասին, երբ բանակցային գործընթացը դրական արդյունք չտա», օրերս հայտարարել է Ադրբեջանի նախագահի աշխատակազմի արտաքին կապերի բաժնի պետ **Նովրուզ Մամեդովը**՝ ավելացնելով», չնայած այսօր Ադրբեջանին մեղադրում են ռազմական հռետորաբանության մեջ, ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն, մենք իրավունք ունենք անհրաժեշտ բոլոր քայլերը ձեռնարկել օկուպացված տարածքների հետ կապված: Քանի դեռ հակամարտությունը կարգավորված չէ, այդ իրավունքը մերն է»:

Նշվածն Ադրբեջանի կողմից տարիներ շարունակ կիրառվող եւ վերջին շրջանում հատկապես ակտիվացած ուժի սպառնալիքի մեկ օրինակ է միայն: Բավական է հիշել փոխարտգործնախարար Արազ Ազիմովի, ինչո՞ւ ոչ, հենց Ալիեւի՝ միմյանց լրացնող հայտարարությունները...

Դժվար է պատկերացնել, թե որեւէ պատերազմ, որեւէ պարագայում կարող է բխել ինչ-որ ազգի շահերից եւ նախընտրելի լինել խաղաղ զարգացման հեռանկարից: Առավել եւս, երբ խոսքը մի երկրի մասին է, որը խաղաղ զարգացման եւ բարգավաճման բոլոր հնարավորություններն ունի՝ հաշվի առնելով իր բնական հարստություններն ու հակամարտության խաղաղ կարգավորման պարագայում իր աշխարհագրական դիրքի ընձեռած հնարավորություններն առավելագույնս օգտագործելու հեռանկարը: Այնուամենայնիվ, ստեղծվում է տպավորություն, որ հնարավոր ռազմական գործողություններն առավել մեծ օգուտ են խոստանում նրանց, ում պատերազմը ֆիզիկապես որեւէ կերպ, ամենայն հավանականությամբ, չի առնչվի (Ադրբեջանի իշխող կլանի ներկայացուցիչները), եւ ովքեր կարող են պատերազմի «ընձեռած հնարավորություններից» նյութական հավելյալ շահույթ ունենալ:

Ամեն դեպքում, ակնհայտ է, որ դեպքերի նման զարգացումը որեւէ կերպ չի կարող բխել ադրբեջանցի ժողովրդի շահերից: Ավելին՝ ադրբեջանական փորձագիտական շրջանակներից տեղեկատվության որոշակի արտահոսքը թույլ է տալիս ենթադրել, որ ղարաբաղյան կարգավորման բանակցային ներկա փաթեթն առավել քան ընդունելի է Ադրբեջանի ժողովրդի համար:

Օրինակ, «Վրաստանը կցանկանար վերադարձնել Աբխազիան եւ Օսիան: Սակայն նա, այսպես ասած, հաշտվել է այն մտքի հետ, որ առաջիկայում այդ տարածքների «երեսը չի տեսնելու» եւ փորձում է առանց այդ տարածքների ինտեգրվել ՆԱՏՕ-ին ու Եվրոպային: Այն բանից հետո, երբ Ադրբեջանը եւ Հայաստանը 20 տարի շարունակ սառեցված հակամարտության կարգավորման հարցում առաջընթաց չեն գրանցել, նրանք եւս որոշումներ են կայացնում՝ իրենց երկրների զարգացման համար նոր ուղիներ գտնելու նպատակով (առանց ղարաբաղյան խնդրի վերջնական կարգավորման)», հայտարարել էր ադրբեջանցի փորձագետ **Զարդուշտ Ալիզադեն**՝ Regnum գործակալությանը տված հարցազրույցի ժամանակ:

Որքան էլ տոնալիտար է Ադրբեջանն, այնուամենայնիվ փորձագիտական շրջանակներից հնչող նման կարծիքները թույլ են տալիս վերականգնել այս երկրում տիրող իրական պատկերն ու հասարակական տրամադրությունները: Փաստորեն, ադրբեջանցիներն իրենք խոստովանում են, որ պատրաստ են զարգացման ուղիներ փնտրել առանց Ղարաբաղի, ինչն էլ, փաստացի, անում են վերջին 20 տարիներին:

Այս պարագայում հարց է ծագում. ինչի՞ վրա են հիմնված Ալիեւի եւ նրա կլանի մյուս ներկայացուցիչների մախսիմալիստական հայտարարությունները ղարաբաղյան կարգավորման հարցում: Մնում է ենթադրել, որ դրանց հիմքում անձնական անհեռատես հավակնություններն ու անձնական նեղ շահերին նույնիսկ սեփական ժողովրդի արյան գնով հետամուտ լինելու պատրաստակամությունն է:

Աննախադեպ համահրանք

Ադրբեջանական IL-76 բեռնատար ինքնաթիռի կործանումը հետաքննելու նպատակով Բաքվից Քաբուլ մեկնած «հատուկ հանձնախումբը» վերադարձել է: Արտառոց է, որ, մի քանի օր շարունակ գտնվելով Աֆղանստանի մայրաքաղաքում, ադրբեջանական փորձագետներն այդպես էլ հնարավորություն չեն ունեցել լինելու աղետի վայրում: Աֆղանական կողմը նրանց պարզապես արգելել է թողնել հյուրանոցի տարածքը եւ խորհուրդ տվել «սպասել»:

Միաժամանակ հայտնի է դարձել, որ աֆղանստանցի մասնագետներն էլ հրաժարվել են լինել ինքնաթիռի կործանման վայրում եւ պատճառաբանել են, թե «դա անվտանգ չէ»: Որոշ տեղեկություններով, աղետի վայրը վերահսկում են «Թալիբան» ընդդիմադիր խմբավորման զինյալները: Ադրբեջանի ԱԳՆ-ն երկու նոտա է հղել Աֆղանստանի կառավարությանն ու այդ երկրում ՆԱՏՕ-ի խմբավորման հրամանատարությանը: Երկու դեպքում էլ Բաքուն խնդրել է հնարավորը անել՝ որոնելու եւ գտնելու օդանավի անձնակազմի անդամների ածյունները: Պաշտոնական պատասխան Ադրբեջանը չի ստացել: Այդուհանդերձ, Աֆղանստանի տրանսպորտի նախարարության պատասխանատուն Պակիստանում Ադրբեջանի դեսպանության երրորդ քարտուղարին հեռախոսազրույցի ժամանակ ասել է, որ «բացի «սեւ արկղից», ինքնաթիռն ամբողջովին մոխրացել է»:

Այսպիսով, ըստ էության, աֆղանական կողմը հասկացրել է, որ զոհվածների ածյունները գտնել եւ տեղափոխել անհնար է: Ադրբեջանական ANS հեռուստաընկերության ներկայացմամբ, Բաքվից Քաբուլ հասած հանձնաժողովի անդամներից մեկը խոստացել էր էլ-փոստով ուղարկել աղետի վայրի լուսանկարները, սակայն վերջին պահին ասել է, որ «աֆղանստանցի պատասխանատուներն արգելում են դա անել»: Ադրբեջանն Աֆղանստանի հետ հարաբերությունները կառուցում է Պակիստանում իր դեսպանատան միջոցով, ինչը բարդություններ է առաջացնում:

Իրավիճակն ավելի են խճճել ամերիկյան զինվորականները: Նրանք ադրբեջանցի մասնագետներին ասել են, որ «հաջողվել է օդանավի «սեւ արկղը» գտնել»: Թե ինչպե՞ս են ամերիկյան զինվորականները մուտք գործել աղետի վայր, եթե այն վերահսկում են թալիբները, այս հանգամանքն ադրբեջանական կողմին դրդել է կասկածել «սեւ արկղի» իսկությանը: Մանավանդ որ «սեւ արկղն» ամերիկացիները հանձնել են Աֆղանստանի տրանսպորտի նախարարությանը: Իսկ վերջինս էլ Բաքվից Քաբուլ հասած մասնագետներին ցույց է տվել ոչ թե «սեւ արկղը», այլ դրա լուսանկարները, որտեղ, ըստ ադրբեջանցի մի պաշտոնյայի, «ոչ մի շիֆր պարզ չի կարդացվում»:

Ադրբեջանական ինքնաթիռի կործանման պատճառների հետաքննություն, ըստ էության, ոչ որ չի անցկացրել: Օդանավի աղետից հետո «Թալիբան» շարժումը հայտարարել էր, որ իր զինյալներն են այն կործանել, քանի որ զենք էր տեղափոխում ՆԱՏՕ-ի համար: Այդպես է, թե ոչ՝ պաշտոնապես չի հաստատվում եւ չի էլ հերքվում: Ու թեեւ ադրբեջանական կողմը պնդում է, թե օդանավն Աֆղանստան էր թռել «ՆԱՏՕ-ի հետ գործարքի շրջանակներում», Քաբուլ մեկնած եւ ձեռնունայն վերադարձած ադրբեջանցի պաշտոնյաների հանդեպ աֆղանական իշխանությունների եւ կոալիցիոն ուժերի հրամանատարության վերաբերմունքը, այն, որ Քաբուլի իշխանությունները մեկ շաբաթ է, ինչ չեն պատասխանում Ադրբեջանի ԱԳՆ նոտային, անուղղակիորեն վկայում են, որ դա եղել է, եթե կարելի է ասել, «օդահենային թռիչք»: Ըստ որոշ տեղեկությունների, Աֆղանստան թռիչքից քիչ առաջ այդ նույն օդանավը Բաքվի Հեյդար Ալիեւի անվան օդանավակայանում վարձք էր կատարել Քուվեյթից եւ հավելյալ բեռ չի վերցրել:

Հարցն ավելի է բարդանում նրանով, որ Բաքվում ԱՄՆ դեսպանատունը հատկապես օդանավի աղետից հետո վերստին Ադրբեջանի մայրաքաղաքում ահաբեկչական գործողությունների մեծ հավանականություն է տեսնում: Նույնն են ասում նաեւ իսրայելական հատուկ ծառայությունները: Իսկ գուցե այդ վտանգը կապ ունի Աֆղանստանում կործանված ադրբեջանական ինքնաթիռի՞ հետ:

Ամեն դեպքում, աֆղանական իշխանությունների եւ այդ երկրում կոալիցիոն ուժերի հրամանատարության վերաբերմունքն Ադրբեջանի ներկայացուցիչների հանդեպ անանախադեպ համահրանք էր: Իսկ դա, թերեւս, հիմնավոր պատճառներ ունի: Եվ Բաքուն էլ ստիպված է կուլ տալ վիրավորանքը: Հակառակ դեպքում կհետեւեն տհաճ բացահայտումներ:

Վ. Ա.

ՀԱՇՎԵՇՄԱՐՏՈՒՄ

Հաջիչին կհանձնեն Հաագայի դատարանին

Վերջին խոչընդոտը ԵՄ-ին անդամակցելու ճանապարհին

Սերբիայի դատարանը որոշել է նախկին Սերբական Կրաինայի Հանրապետության ղեկավար Գորան Հաջիչին հանձնել Հաագայի միջազգային դատարանին: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Հաջիչի ձերբակալության մասին հայտնի էր դարձել հուլիսի 20-ին: Նույն օրը սկսվել էր դատավարություն: Նրա արտաքսման սույգ օրը հայտնի չէ, սակայն Ոյթեր գործակալությունը, Սերբիայում պատերազմական հանցանքները քննող դատախազությունը վկայակոչելով, հաղորդում է, որ արտաքսումը տեղի կունենա մոտ օրերս:

Դատախազ Վլադիմիր Վուկչեւիչը հայտնել է ձերբակալության որոշ մանրամասնություններ: Կալանավորման պահին Հաջիչի մոտ եղել է ատրճանակ, բայց նա չի դիմադրել: Հաջիչը մտադրվել էր մոտ ժամանակներս հեռանալ Սերբիայից: Նրա հետ մեկտեղ ձերբակալվել է մի մարդ, որի օգնությամբ նա պատրաստվում էր լքել երկիրը:

Վերջին տարիներին Հաջիչն ապրում էր հորինված անվամբ: Նրա հետքը գտել էին այն բանից հետո, երբ փորձել էր վաճառել Մոդիլիանիի նկարներից մեկը (հավանաբար ձեռք էր բերել Խորվաթիայի պատերազմի ժամանակ):

Գորան Հաջիչը վերջինն է պատերազմի հանցագործներից, որոնց հանձնումը Սերբիայից պահանջում էր Հաագայի դատարանը: 2004-ին նրան մեղադրանքներ էին ներկայացվել պատերազմական հանցագործությունների եւ մարդկության դեմ ուղղված հանցանքների 14 կետերով, որոնցից է մասնակցությունը 1991-1993թթ. խաղաղ խորվաթ բնակչության տեղահանությանն ու սպանություններին:

Հաջիչը վերջին խոչընդոտն էր Սերբիայի ԵՄ-ի անդամ դառնալու ճանապարհին: Ենթադրվում է, որ մոտ ժամանակներս Սերբիան կարող է ԵՄ-ի անդամակցության բանակցություններ սկսել:

Վարչապետ Կեմերոնը «դաս է առել» News of the World-ի սկանդալից

«Նվաստացուցիչ օր» Մերդոկի համար

Մեծ Բրիտանիայի խորհրդարանում լսումներ են անցկացվել մեդիամագնաս Ռուպերտ Մերդոկի News of the World թերթի իրականացրած գաղտնալսումների սկանդալի կապակցությամբ: Վարչապետ Դեյվիդ Կեմերոնը ստիպված ինքնարդարացման ելույթ է ունեցել, քանի որ այդ թերթի նախկին խմբագիր Էնդի Քոուլսոնին աշխատանքի էր ընդունել որպես մամուլի քարտուղարի եւ նրան «բարեկամ» էր անվանել:

Քաղաքացիների մասնավոր կյանքին թերթի աշխատակիցների միջամտության, ոստիկանների կաշառման եւ այլ փաստերի առնչությամբ վարչապետն ասել է, որ ինքը «դաս է առել» այդ ամենից: Նրա խոսքերով՝ տվյալ սկանդալը «խարխլեց մարդկանց վստահությունը ՁԼՄ-ների, քաղաքական գործիչների եւ ոստիկանության հանդեպ»:

Ըստ Կեմերոնի, բրիտանացիները ակնկալում են, որ քաղաքական գործիչները կպարզեն տվյալ սկանդալի հանգամանքները եւ ի վերջո կկենտրոնանան առավել կարեւոր թեմաների վրա. գործազրկության, ներգաղթի եւ սոցիալական բարորության խնդիրներ:

BBC-ն հաղորդում է, որ վարչապետի կարճաստեւ ելույթից հետո հանդես է եկել ընդդիմության առաջնորդ էդ Միլիբենդը: Նա Կեմերոնին առաջարկել է անհապաղ ներողություն խնդրել թերթի նախկին խմբագիր Էնդի Քոուլսոնին աշխատանքի ընդունած լինելու համար, դա անվանելով «լուրջ սխալ»:

Պատգամավորների առջեւ ելույթ ունենալով՝ Կեմերոնն ասել է, որ դատավոր Լեւեսոնի գլխավորությամբ ստեղծվել է հատուկ հանձնաժողով, որն անմիջապես սկսելու է News of the World-ի լրագրողների կողմից հեռախոսազրույցների անօրինական գաղտնալսման եւ ոստիկանների կաշառման փաստերի հանրային քննություն: Վարչապետի խոսքերով՝ հանձնաժողովի լիազորություններն ընդլայնվելու են. շուտով այն կզբաղվի բրիտանական նաեւ մյուս լրատվամիջոցներում տիրող իրավիճակի քննությամբ:

Նախօրեին մեդիամագնաս Ռուպերտ Մերդոկը ցուցմունքներ էր տվել Մեծ Բրիտանիայի խորհրդարանի հանձնախմբերից մեկում: Մերդոկը դա անվել էր իր կյանքի «ամենավստահելի օր»:

Մեդիամագնատն ասել է, որ իրեն անձամբ պատասխանատու չի համարում News of the World-ի սկանդալի համար, սակայն վշտացած է այն մարդկանց վարքագծից, ում վստահել էր ինքը, քանզի իր ընկերության որոշ աշխատակիցներ «մոլորության մեջ էին գցել իրեն»:

Ռուպերտ Մերդոկի որդին՝ Ջեյմս Մերդոկը, ներողություն է խնդրել բջջային հեռախոսների եւ ձայնային փոստի գաղտնալսման համար, եւ հայտարարել է, որ նման վարքագիծն անթույլատրելի է:

Խորհրդարանական հանձնախմբի հատուկ նիստը հեռարձակվում էր BBC-ի ուղիղ եթերում:

Պ. Ք.

Հայաստանում կնկարահանվի նոր ֆիլմ Նորա Արմանիի մասնակցությամբ

Սփյուռքահայ հանրաճանաչ դերասանուհի, բեմադրիչ եւ պրոդյուսեր **Նորա Արմանիի** թատերական գործունեությանը «**Ազգ**»-ը պարբերաբար անդրադառնում է ու իր ընթերցողներին ներկայացնում այն հաջողությունները, որ ունենում է սիրված դերասանուհին: Նորայի արմատները Կեսարիայից են, ընտանիքը ցեղասպանությունից մի կերպ, հրաշքով փրկվել եւ հաստատվել է Եգիպտոսում: Եգիպտոսում էլ ծնվել է Նորան, իսկ ամուսնանալուց հետո երկար տարիներ ապրել Ֆրանսիայում, հետո Ամերիկայում, կրկին Ֆրանսիա, այժմ Նյու Յորք՝ ամուսնու հետ: Նորա Արմանին այս անգամ հրավիրվել էր «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնին: Սակայն Փարիզից-Երեւան թռիչքը ինչ-ինչ պատճառներով հանվել է, եւ դերասանուհին երկու օր ուշացումով հասավ Հայաստան:

Հայ հանդիսատեսը հիշում է Նորայի մոնոներկայացումը՝ «Հայրիկ, դու խենթ ես», որը նվիրված էր Վիլյամ Սարոյանի 100-ամյակին, եւ ընդունվեց ջերմորեն: Դրանից հետո Հ. Պարոնյանի անվ. կոմեդիայի թատրոնում Արմեն Ջիգարխանյանի հետ ներկայացրեցին եւս մեկ բեմադրություն: Իսկ թե ի՞նչ տպավորություններ ունի «Ոսկե ծիրան» փառատոնից «**Ազգ**»-ի հարցին, ասաց. «Նախ ասեմ, որ շատ երջանիկ եմ կրկին մայր հայրենիքում գտնվելուս համար, հանդիպելու իմ շատ լավ ընկերներին, բարեկամներին ու նաեւ կինոյի աշխարհահռչակ մարդկանց հետ: Առաջին անգամն էր, որ որպես հյուր մասնակցում էի փառատոնին ու շատ տպավորված եմ ու շատ գոհ, որ մեծ մասշտաբի փառատոներից մեկն է այսօր «Ոսկե ծիրանը»: Ես 1992-ից ի վեր շատ փառատոների եմ մասնակցել ու եթե համեմատելու լինեմ, ապա պետք է ասեմ, որ այս փառատոնը կարող է յուրահատկություն երկրի կինոփառատոնի հետ մրցել իր ծրագրում ընդգրկած ֆիլմերի բազմազանությամբ, դրանց այժմեականությամբ, կարեւոր հյուրերի մասնակցությամբ, կազմակերպչական հստակ կատարողականով եւ այլն: Իսկ որ ամենակարեւոր է՝ հայտնի կինոփառատոներում մրցանակների արժանացած ֆիլմերը շատ էին «Ոսկե ծիրանի» ծրագրում:

«Ուրբաթ» ակումբում երեկ դերասանուհու եւ լրագրողների հանդիպումն անցավ ջերմ մթնոլորտում: Հայ կինոյի զարգացման միտումներ տեսնո՞ւմ է հարցին, դերասանուհին ասաց. «Այո՛, անշո՛ւշտ, տեսնում եմ: Բայց նաեւ առաջարկ ունեմ, որ հայ գործարարները, մեծահարուստները, ովքեր այսքան շենքեր են կառուցում (որոնք գրեթե դատարկ են.- Մ.Մ.), նրանց օրենքով պարտադրվի, որպեսզի իրենց միջոցներից որոշ տոկոս հատկացնեն մշակույթին, կամ իրենց այդ շենքերում թատրոն, կինոդահլիճ, ինչու չէ՝ նաեւ դպրոց բացեն: Ես ուրախ կլինեի, եթե Երեւանի քաղաքապետն ինձ ընդուներ ու իմ առաջարկները լսեր: Եվ ոչ միայն առաջարկներս, այլ նաեւ գնահատանքի խոսքերս, թե ինչպես Երեւանը գեղեցկացել է, ծաղիկներն ու կանաչը շատացել: Բայց ցավում եմ, որ այդ ամենը միայն կենտրոնում է, իսկ ծայրամասերը՝ լքված են...»:

Այս տարի լրանում է Արա Երնջակյանի նկարահանած «Ժամկետ եւ 7 օր» ֆիլմի 20 տարին, որտեղ Նորա Արմանին խաղացել է գլխավոր դեր: Իսկ նրա առաջիկա պլաններում, ինչպես դերասանուհին ասաց, ծրագիր ունի. նկարահանվելու է Հայաստանի որեւէ գյուղում՝ Գնել Նալբանդյանի գաղափարի հիման վրա ֆիլմում, ու այժմ հստակեցվում է սցենարը, եւ որում Նորան խաղալու է գլխավոր դեր: «**Ազգ**»-ի հարցին, թե այժմ ինչո՞վ է զբաղվում, Նորան պատասխանեց. «Նկարվում եմ երիտասարդ ամերիկացի ռեժիսոր Ջաֆ Ջոհանանի «Ջյուն է գալիս Լոս Անջելեսում» պայմանական վերնագրով ֆիլմում, խաղում եմ մասնավոր խուզարկու-իրավաբանի դերը, որին ֆիլմի վերջում սպանում եմ մաֆիայի ու կեղտոտ գործարքների մեջ մտնելու համար: Հայաստանից հենց գնամ՝ կնկարահանեն արդեն վերջին տեսարանը ու ինձ «կսպանեն...», պատմում էր Նորան կատակով:

«Երեւանը դարձել է եվրոպական քաղաք, եւ կարծում եմ՝ այստեղ միակ պրոբլեմը փողն է, եթե այդ հարցը լուծվի, շատ այլ հարցեր էլ կլուծվեն: Ցեղասպանությունը ամեն հայի համար շատ կարեւոր է, եւ ես վերադառնալով իմ արմատներին՝ ուսումնասիրում եմ տատիկիս ու իր 3 քույրերի ճակատագիրը, թե ինչպես նրանք ու իրենց շառավիղները հայտնվեցին աշխարհի տարբեր ծայրերում. Կեսարիայից՝ Եգիպտոս, Ավստրալիա, Կանադա, Երեւան: Այդ սցենարը կարծում եմ կավարտեմ մի քանի տարի հետո ու կնվիրեմ Հայոց ցեղասպանության 100-ամյակին»:

Դերասանուհու համար թատրոնը առաջին տեղում է, սակայն այժմ թատերական ներկայացումը ավելի թանկ է բեմադրել, քան կինո նկարելը, ասում է Նորան ու ավելացնում. «Ես շատ եմ սիրում թատրոնը, որովհետեւ շփումը հանդիսատեսի հետ շատ կարեւոր է ինձ համար, իսկ կինոյում այդպես չէ, բայց կինոն մնում է շատ երկար ու կարող է հեղինակություն ու ճանաչում բերել: Իսկ ինչ վերաբերում է՝ իմ հայ լինելը օգնում է, թե՞ խանգարում հարցին, նայած՝ թե ո՛ր միջավայրում եմ գտնվում: Գուցե մեկին հետաքրքրում է հենց նման հայի կերպարը, կամ հակառակը: Իսկ եթե կրկին ծնվեի, ապա կրկին դերասանուհու, բեմադրիչի մասնագիտությունը կընտրեի, բայց այս անգամ արդեն հստակ գիտենալով, թե ինչ ճանապարհներով ու ինչ ծրագրերով այն կիրականացնեի»:

«**Ազգ**»-ի հարցին, թե տարբեր ժամանակներ, տարբեր երկրներում եք ապրել ու ստեղծագործել, հնարավո՞ր է մի օր էլ վերադառնաք Հայաստան եւ այստեղ շարունակեք ձեր գործունեությունը, Նորա Արմանին ժպտաց ու ասաց. «Չի բացառվում, որ մի օր էլ ամուսնուս հետ կհայտնվենք Հայաստանում, քանի որ ամուսինս էլ հայ է, եւ Հայաստանը շատ է սիրում»:

Նորան Երեւանի փողոցներով շրջելիս ամեն քայլի ոգեւորվում էր նոր բացված սրճարաններով, խանութներով ու նաեւ կանոններով մեքենան վարող վարորդների վերաբերմունքից եւ հպարտորեն ասում, որ Հայաստանը դարձել է հրաշալի մի վայր, որը կհարգուի շատ զբոսաշրջիկների, հատկապես եթե հյուրանոցների ու օդանավերի տոմսերի գները էժանանան: Նորա Արմանիի ամենամեծ երազանքը, որը հույս ունի մի օր իրականացնել՝ հեռուստատեսությամբ խոհարարական շարք վարել ու աշխարհին ներկայացնել հայկական ավանդական հրաշալի խոհանոցը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Պաշտոնապես ընդունվել է Մանկական Եվրոտեսիլի նշանաբանը եւ տարբերանշանը

Երեկ «Անի պլազա» հյուրանոցում տեղի ունեցավ Մանկական Եվրոտեսիլին նվիրված մամուլի ասուլիս, որի շրջանակում ներկայացվեց մրցույթի պաշտոնական տարբերանշանը եւ նշանաբանը: Այն մշակվել է Հանրային հեռուստատեսության ստեղծագործական թիմի, Անտոն Բառանովի եւ Եվրոպական հեռարձակողների միության համատեղ աշխատանքի արդյունքում: Տարբերանշանը խորհրդանշում է սարեր, այսինքն՝ բարձունք, իսկ նաշանաբանը՝ Reach for the top, Հասի՛ր բարձունքին: Մանկական Եվրոտեսիլի մասնակցության հայտեր են ներկայացրել՝ Ռուսաստանի Դաշնությունը, Վրաստանը, Ուկրաինան, Բելոռուսը, Մոլդովան, Բելգիան, Լիտվիան, Մակեդոնիան, Հոլանդիան, Սան Մարինոն, Շվեդիան, իսկ Բուլղարիայի եւ Հունաստանի մասնակցության հարցը քննարկվում է: Ինչ վերաբերում է Թուրքիայի եւ Ադրբեջանի մասնակցությանը, վերջիններս դեռեւս մասնակցության հայտ չեն ներկայացրել:

Մանկական Եվրոտեսիլի պատվիրակության ղեկավար Գոհար Գասպարյանը նշեց, որ ստեղծվել է Մանկական Եվրոտեսիլի երկրպագուների ակումբ, որի անդամները ակտիվ գործունեություն են ծավալում, արդեն նկարահանել է ֆիլմ, որն ամբողջ աշխարհին պատմում է Երեւանի, հայ երեխաների մասին:

«Ազգ»-ի հարցին, թե իրականությանը համապատասխանո՞ւմ են այն լուրերը, թե կամավորներ եւս կներգրավվեն Եվրոտեսիլի կազմակերպչական աշխատանքներին, Գոհար Գասպարյանը պատասխանեց. «Այո, դա իրականությանը համապատասխանում է: Ամեն տարի, տարբեր երկրներում Եվրոտեսիլի մրցույթի կազմակերպչական աշխատանքներին մասնակցում են բազմաթիվ կամավորներ, որոնք սովորական մարդիկ չեն, այլ կազմակերպչական ջիղով օժտված, աղմինիստրատիվ գիտելիքներով զինված եւ մի քանի լեզվի տիրապետող անձինք: Մենք եւս պատրաստվում ենք լուրջ ընտրություն կատարել: Այն մարդիկ, որոնք ունեն վերոնշված հատկանիշները, կարող են դիմել մեզ»:

Այս տարի Մանկական Եվրոտեսիլը կկայանա դեկտեմբերի 3-ին, Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում:

Նշենք նաեւ, որ 2010թ. Բելոռուսի մայրաքաղաք Մինսկում Մանկական Եվրոտեսիլ մրցույթում Հայաստանը ներկայացնող Վլադիմիր Արզումանյանն իր «Մամա» երգով հաղթեց 120 միավորով:

Ի տարբերություն մեծահասակների Եվրոտեսիլի, Մանկական մրցույթում չի գործում հաղթող երկրում անցկացնելու սկզբունքը: Սակայն Հանրային Հեռուստատեսությանը երկար բանակցություններից հետո հաջողվեց ձեռք բերել մրցույթը Երեւանում անցկացնելու պայմանավորվածությունը:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՄԱՇԱԽՈՍԱԿԱՆ

Պարույր Մամբրեի Մուրադյան



Հայագիտությունը ծանր կորուստ կրեց:

Երկարատեւ հիվանդությունից հետո կյանքի 79-րդ տարում վախճանվեց ականավոր հայագետ-աղբյուրագետ, կովկասագետ, ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի գլխավոր մասնագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պարույր Մամբրեի Մուրադյանը:

Պ. Մուրադյանը ծնվել է 1933թ. մարտի 25-ին Ջավախքի Ղադո (հայ. Փառար) գյուղում: 1952 թ. ավարտել է Ազավրեթի միջնակարգ դպրոցը: 1953-58 թթ. սովորել եւ ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի արեւելյան (պարսկական) բաժինը: 1960-1962 թթ. սովորել է Հայաստանի ԳԱ ասպիրանտուրայում՝ ուսումնառությունն անցկացնելով Թբիլիսիի պետական համալսարանում: 1963 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հայ-վրացական մատենագրական փոխհարաբերությունները 18-րդ դարում» թեմայով: 1963-1970 թթ. աշխատել է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հին գրականության բաժնում: 1970 թ. աշխատել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, իսկ 1976 թվականից նաեւ ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտում, որտեղ կազմավորել եւ գլխավորել է կովկասագիտության եւ բյուզանդագիտության բաժինը: 1986 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Վրաստանի հայերեն արձանագրությունները. Քարթլի եւ Կախեթ» թեմայով: 1989 թ. ստացել է պրոֆեսորի կոչում, դարձել է Մեսրոպ Մաշտոցի մրցանակի դափնեկիր: 1991/92 ուսումնական տարում կովկասագիտության դասընթաց է վարել Գերմանիայում (Տրիրի համալսարան): 2002-2003 թթ. դասավանդել է Հ. Աճառյանի անվան համալսարանում: Պ. Մուրադյանը երկար տարիներ դասավանդելով Երեւանի պետական համալսարանում՝ աճեցրել է բազմաթիվ երիտասարդ մասնագետներ:

Նշանակալի է պրոֆ. Պարույր Մուրադյանի վաստակը հայոց միջնադարյան մատենագրության, մշակույթի, ճարտարապետության, պատմական սկզբնաղբյուրների ու վիմագրական հուշարձանների հիմնարար հետազոտությունների բնագավառում:

Հայագիտության համար խոշոր երեւույթ էր Պ. Մուրադյանի կողմից «Վրաց ժամանակագրություն»-ը հին վրացերենից հայերենի ամբողջական թարգմանությունն ու հրատարակումը:

Մնայուն եւ գիտական մեծարժեք հետազոտություններ են «Armeno-Georgica» մատենաշարով հրատարակված Պ. Մուրադյանի մենագրությունները՝ Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Վրաստանի հայերեն արձանագրությունները (2 հատոր), Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Շուշանիկի վկայաբանության հայերեն եւ վրացերեն խմբագրությունները:

Պ. Մուրադյանը թողել է գիտական հսկայական ժառանգություն՝ ավելի քան 300 տպագիր աշխատություն:

Նրա ուսումնասիրություններին հատուկ է գիտական հիմնավորվածությունը, առաջադրվող եզրակացությունների թարմությունն ու համարձակությունը, գիտական նորույթը: Պրոֆ. Պ. Մուրադյանի գիտական գործունեությանը բնութագրական է գիտական հետեւողականությունը եւ ուսումնասիրության խնդիրների լայն շրջանակի ընդգրկումը: Նա ծավալել է գիտակազմակերպչական ակտիվ գործունեություն, մեծ վաստակ ունի ինչպես հայագիտական նոր ուսումնասիրությունների ծրագրավորման, նոր կադրերի ստեղծման, այնպես էլ անվանի հայագետ գիտնականների վաստակի գնահատման ու նորովի ներկայացման, հայագիտական նոր հրատարակումների ու շարքերի ստեղծման ու խմբագրման ասպարեզներում:

Նա կազմել ու խմբագրել է «Կովկաս եւ Բյուզանդիա», «Հայագիտական հետազոտություններ», «Հայագիտական մատենադարան», «Հուշարձան» մատենաշարերը, խմբագրել է շատ հայագետների մենագրություններ, կազմել եւ հրատարակել է անվանի հայագետների գիտական ժառանգությունը ամփոփող ժողովածուներ (Ն. Մառ, Հ. Օրբելի, Լ. Խաչիկյան, Լ. Մելիխեթ-Բեկ, Երվանդ Տեր-Մինասյան, Մկրտիչ Ներսիսյան եւ այլք):

Պրոֆ. Պ. Մուրադյանը եղել է գիտական, գիտամեթոդական ու խմբագրական մի շարք խորհուրդների անդամ: Գիտական զեկուցումներով մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների ու կոնգրեսների ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանյան շատ երկրներում, Հայաստանում կազմակերպել է «Քրիստոնյա Արեւելք» միջազգային գիտաժողովը եւ հրատարակել նրա նյութերը:

Պ. Մուրադյանը բազմիցս արձագանքել է նաեւ պատմության կեղծարարություններին եւ պարբերական մամուլի ու գիտական հանդեսների էջերում բազմիցս հանդես է եկել սուր գրախոսություններով:

Պատմական գիտությունների դոկտոր, Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակի դափնեկիր պրոֆ. Պարույր Մամբրեի Մուրադյանը պատմաբանասիրական լայն ընդգրկում ունեցող գիտնական էր, որը խոր հետք է թողել Հայաստանում կովկասագիտության ձեւավորման ու զարգացման բնագավառում:

Նա դեռեւս շատ անելիքներ եւ մեծ ծրագրեր ուներ իրականացնելու:

Պարույր Մուրադյանի՝ անխոնջ գիտնականի եւ բարի մարդու հիշատակը թանկ ու անմոռաց է հայագետների, բազմաթիվ գործընկերների, աշակերտների, ինչպես նաեւ Հայաստանի ողջ մտավորականության համար:

Հոգեհանգիստը տեղի կունենա հուլիսի 22-ին, ժամը 18:00-ին:

Հուղարկավորությունը՝ հուլիսի 23-ին, ժամը 14:00-ին:

Հասցեն՝ Երեւան, Գյուլիխեխվյան փողոց, շենք 3, բնակարան 34 (3-րդ մուտք, 5-րդ հարկ):

ՀՀ ԳԱԱ նախագահություն
ՀՀ ԳԱԱ հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունք
ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտ
ԵՊՀ պատմության ֆակուլտետ

Գաբրիել Սարգսյանը հաղթանակ պարգևեց Հայաստանի հավաքականին

Շախմատի աշխարհի թիմային առաջնության միանձնյա առաջատար Հայաստանի հավաքականը 5-րդ տուրում մրցելով տանտերերի՝ չինացի շախմատիստների հետ, 2,5-1,5 հաշվով կարևոր հաղթանակ տոնեց: Մեր թիմի հաջողությանը նպաստեց 4-րդ խաղատախտակի վրա հանդես եկող Գաբրիել Սարգսյանի հաղթանակը Յույ Յանիի նկատմամբ: Սպիտակներով խաղացող հայ շախմատիստը վերջինն ավարտեց մրցավեճը՝ վճռելով մրցակցության ելքն իր թիմի օգտին: Նա մրցակցի արքայական թեւի վրա ուժեղ գրոհ կազմակերպեց, որի արդյունքում Յույ Յանին մատի սպառնալիքի տակ 45-րդ քայլին ստիպված էր հանձնվել: Սա մրցաշարում Գաբրիելի 2-րդ հաղթանակն էր: Առաջինը նա տոնել էր մեկնարկային տուրում իսրայելցի Թամիր Նաբատուի նկատմամբ:

Չինաստանի հավաքականի հետ մրցախաղում առաջինն իր մրցավեճն ավարտեց Լեւոն Արոնյանը՝ գրեթե երկժամյա պայքարից հետո սեւերով հաշտություն կնքելով Վան Հաոյի հետ: Հետաքրքրական է, որ այդ պահին մրցաշարում ոչ մի պարտիա չէր ավարտվել: Որոշ ժամանակ անց իր թիմակցի օրինակին հետեւեց Վլադիմիր Հակոբյանը՝ 26-րդ քայլին ոչ-ոքի ավարտելով պարտիան Լի Չաոյի հետ: Ապա գրանցվեց 3-րդ ոչ-ոքի արդյունքը

Սերգեյ Մովսիսյանի եւ Վան Յուեի մրցավեճում:

Հայաստանի հավաքականը 5 տուրից հետո վաստակած թիմային 8 միավորով (բոլոր պարտիաներում վաստակած միավորների քանակը՝ 13,5) շարունակում է միանձնյա գլխավորել աղյուսակը: Մեր թիմում առայժմ բոլորից հաջող են խաղում Վլադիմիր Հակոբյանն ու Սերգեյ Մովսիսյանը, որոնք 5 հնարավորից 3,5-ական միավոր են վաստակել: Գաբրիել Սարգսյանը թիմին 5 հանդիպումներում 3 միավոր է պարգեւել: Լեւոն Արոնյանը 4 հնարավորից 2,5 միավոր ունի, իսկ Ռոբերտ Հովհաննիսյանը հաղթել է անցկացրած միակ պարտիայում:

Կարեւոր նշանակություն ուներ Ադրբեջան-Ուկրաինա մրցախաղի արդյունքը: Մրցավեճի ելքը վճռեց վերջինն ավարտված Գադիր Հուսեյնով-Ալեքսանդր Մոիսեենկո պարտիան: Ուկրաինացի գրոսմայստերը հաղթեց ու մրցակցության ելքը վճռեց հօգուտ իր թիմի՝ 2,5-1,5: Ռաջաբով-Իվանչուկ, Հաշիմով-Էլյանով, Մամեդյարով-Եֆիմենկո պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Հունգարիան խոշոր՝ 3,5-0,5 հաշվով պարտության մատնեց Իսրայելի հավաքականին: Եգիպտոսի հավաքականի նկատմամբ իր առավելությունը հաստատեց նաեւ Ռուսաստանի հավաքականը՝ հաղթելով 3-1 հաշվով: ԱՄՆ-ի ընտրանին էլ պարտության մատնեց հնդիկ շախմատիստներին (3-1):

5-րդ տուրի մրցախաղերից հետո Ռուսաստանի եւ Հունգարիայի հավաքականները վաստակել են 7-ական միավոր ու հետապնդում են հայերին: 6 միավոր ունի Ուկրաինան, 5-ական՝ Ադրբեջանը, Չինաստանը եւ ԱՄՆ-ը:

Այսօր մրցաշարում հանգստյան օր է, իսկ վաղը կայանալիք 6-րդ տուրում Հայաստանի հավաքականը կմրցի Հնդկաստանի ընտրանու հետ, որը վաստակել է 3 միավոր: Ուշադրության կենտրոնում կլինի Ռուսաստան-Ուկրաինա մրցախաղը: Կայանան նաեւ Իսրայել-Ադրբեջան, ԱՄՆ-Հունգարիա, Եգիպտոս-Չինաստան մրցախաղերը:

«Միկան» էլ լքեց ասպարեզը

Եվրագավաթների մրցաշարերում Հայաստանի վերջին ներկայացուցիչը՝ «Միկան» էլ դուրս մնաց հետագա պայքարից: Եվրոպայի լիգայի որակավորման 2-րդ փուլի առաջին խաղում հյուրընկալվելիս 0-1 հաշվով զիջելով նորվեգական «Վոլերենգային», «Միկան» երեկ սեփական հարկի տակ ոչ միայն չկարողացավ ռեւանշի հասնել, այլեւ կրկին խաղադաշտը թողեց պարտված:

Թվում էր, թե սեփական դաշտում մեկ գնդակի տարբերությունը վերացնելն այնքան էլ բարդ խնդիր չէ: Սակայն դա իրականացնել «Միկային» չհաջողվեց: Եվ ինչպե՞ս կարող էին դաշտի տերերը հաջողության հասնել, եթե խաղում էին ընդամենը մեկ «մաքուր» հարձակվողով, գրոհներն էլ կազմակերպում էին փոքր ուժերով: Թեեւ «Միկան» բավականին ակտիվ սկսեց հանդիպումը, սակայն լուրջ սպառնալիք մրցակցի դարպասին չստեղծեց: Միակ գոլային պահն առաջին խաղակեսում ստեղծվեց վերջին րոպեին, սակայն էդնեյի տուգանային հարվածից հետո Նարեկ Բեգլարյանը նպաստավոր դիրքից շեղ հարվածեց գլխով:

Հյուրերը խաղասկզբում հիմնական ուշադրությունը դարձրել էին պաշտպանությանը եւ չէին շտապում դիմելու վճռորոշ գործողությունների: Սակայն համոզվելով, որ միկացիների գրոհներն իրենցից առանձնապես վսանգ չեն ներկայացնում, «Վոլերենգան» ակտիվացավ ու մի քանի անգամ սպառնաց Գեւորգ Կասպարովի պաշտպանած դարպասին: Մասնավորապես կարող էր աչքի ընկնել Սինխը, սակայն գնդակը դիպչելով Հրայր Մկոյանին, դուրս եկավ դաշտի սահմաններից: Քիչ անց արդեն Կասպարովը փրկեց թիմին՝ հետ մղելով Նիլսենի հարվածը:

Թվում էր, թե ընդմիջումից հետո «Միկան» կդիմի վճռորոշ գործողությունների՝ փորձելով հաջողության հասնել: Սակայն հաջողությունն ուղեկցեց հյուրերին: 48-րդ րոպեին անկյունայինի խաղարկումից հետո Ֆրեդի դոս Սանթոսը գլխի հարվածով գրավեց «Միկայի» դարպասը՝ փաստորեն վճռելով հաջորդ փուլի ուղեգրի հարցը:

Բաց թողած գոլից հետո «Միկայի» խաղը լրիվ կազմալուծվեց: Իսկ հյուրերը հիմնականում զբաղված էին գնդակ պահելով ու առանձնապես չէին ձգտում սրելու խաղն ու 2-րդ գոլը խփելու, թեեւ ունեցան դարպասը գրավելու հնարավորություններ՝ փորձելով հաջողության հասնել: Սակայն հաջողությունն ուղեկցեց հյուրերին: 48-րդ րոպեին անկյունայինի խաղարկումից հետո Ֆրեդի դոս Սանթոսը գլխի հարվածով գրավեց «Միկայի» դարպասը՝ փաստորեն վճռելով հաջորդ փուլի ուղեգրի հարցը:

Բաց թողած գոլից հետո «Միկայի» խաղը լրիվ կազմալուծվեց: Իսկ հյուրերը հիմնականում զբաղված էին գնդակ պահելով ու առանձնապես չէին ձգտում սրելու խաղն ու 2-րդ գոլը խփելու, թեեւ ունեցան դարպասը գրավելու հնարավորություններ: Ճիշտ է, «Միկան» խաղավերջում կարծես թե հիշեց, որ պետք է ձգտել գոնե պարտությունից խուսափել ու մի քանի վսանգավոր պահեր ստեղծեց, սակայն այդպես էլ գոլ խփել չհաջողվեց:

Այո, եվրագավաթների ընթացիկ մրցաշարում մեր 4 ակումբների համար գոլ խփելը դարձել էր դժվարագույն խնդիր: Անցկացրած 8 հանդիպումներում մեր թիմերն իրենց օգտին ընդամենը 2 գոլ գրանցեցին (մեկը՝ 11 մ հարվածով), փոխարենը բաց թողնելով 18 գնդակ: 8 հանդիպումներից միայն մեկում «Բանանցին» հաջողվեց հյուրընկալվելիս խաղը ավարտել ոչ-ոքի (1-1) 11 մ հարվածով խփած գոլի շնորհիվ: Իսկ մյուս 7 խաղերում մերոնք պարտվեցին: Այս ամենը վկայում է հայկական ֆուտբոլի ցածր վարկանիշի, մեր ակումբների անորակ խաղի մասին:

Վրաստանի չեմպիոնը կշարունակի պայքարը

Հինգ հանդիպումներով ավարտվեց ֆուտբոլի չեմպիոնների լիգայի որակավորման 2-րդ փուլը: Եթե Հայաստանի եւ Ադրբեջանի չեմպիոններին չհաջողվեց հաջորդ փուլի ուղեգիր նվաճել, ապա Վրաստանի ուժեղագույն ակումբը՝ «Զեստաֆոնին» հաջողությամբ լուծեց իր առջեւ դրված խնդիրը: Վրաստանի չեմպիոնը դեռեւս առաջին խաղում սեփական հարկի տակ ամրության մեծ պաշար էր ստեղծել՝ 3-0 հաշվով հաղթելով մոլդովական «Դաչիային», որին մարզում է խորհրդային հայտնի ֆուտբոլիստ Իգոր Դոբրովոլսկին: Պատասխան խաղում մոլդովացիներին հաջողվեց միայն 2 գոլ խփել, ինչը բավարար չէր պայքարը շարունակելու համար:

Որակավորման 3-րդ փուլում «Զեստաֆոնին» կմրցի ավստրիական «Շտուրմի» հետ: Վերջինս թեեւ հյուրընկալվելիս 2-3 հաշվով զիջեց հունգարական «Վիդեոտոնին», սակայն ի հաշիվ սեփական հարկի տակ տոնած հաղթանակի (2-0), մտավ հաջորդ փուլ:

Պայքարը կշարունակի Նորվեգիայի չեմպիոն «Ռոսենբորգը», որն առաջին խաղում 5-0 հաշվով ջախջախել էր Իսլանդիայի «Բրեյդաբլիկին», իսկ պատասխան խաղում պարտվեց (0-2): Հաջորդ փուլում «Ռոսենբորգի» մրցակիցը կլինի Պլզենի «Վիկտորիան»: Կիպրոսի «Ամոթելը» 2-րդ խաղում էլ «չոր» հաշվով (4-0) պարտության մատնեց Ալբանիայի «Շկենդերբեուին»: Հաջորդ փուլ մտավ նաեւ Հայֆայի «Մաքաբին», որը թեեւ մրցակցի դաշտում 2-3 հաշվով պարտվեց Բոսնիայի «Բորացին», սակայն առաջին խաղում հաղթել էր 5-1 հաշվով:

ԲՈՆՅՔԱՄԱՐՏ

Ռինգ դուրս կգան 9 բոնցֆամարտիկներ

Ասանայում մեկնարկող բոնցֆամարտի աշխարհի պատանեկան առաջնությունում Հայաստանից ռինգ դուրս կգան 9 բոնցֆամարտիկներ: Պատանեկան հավաքականի գլխավոր մարզիչ Ֆեդյա Ալեքսանյանը թիմում ընդգրկել է Հայրիկ Նազարյանին (46 կգ), Էրիկ Պետրոսյանին (48 կգ), Հենրիկ Հովհաննիսյանին (52 կգ), Վալերի Գալստյանին (54 կգ), Արշակ Գրիգորյանին (60 կգ), Ռադիկ Գրիգորյանին (63 կգ), Գոռ Ջեւելեկյանին (66 կգ), Նարեկ Մանասյանին (70 կգ) եւ գերծանրաշային Սերյոժա Հակոբյանին:

Հիշեցնենք, որ վերջերս Հունգարիայում ավարտված Եվրոպայի պատանեկան առաջնությունում Գոռ Ջեւելեկյանն ու Նարեկ Մանասյանը դարձել էին բրոնզե մրցանակակիրներ:

Հաղթական մեկնարկ

Հունաստանի Պալեոհորա քաղաքում մեկնարկած շախմատի մրցաշարի 248 մասնակիցների թվում են Տիգրան Սիմոնյանն ու Վլադիմիր Պողոսյանը: Հիշեցնենք, որ Սիմոնյանը հունական Ռեհիմնո քաղաքում օրերս ավարտված մրցաշարում գրավել էր 23-րդ տեղը: Այդ մրցաշարում հաղթած ուկրաինացի գրոսմայստեր Յուրի Կրիվոռուչկոն էլ մասնակիցների թվում է: Նա իր վարկանիշով (2652) 2-րդն է եւ զիջում է միայն հնդիկ գրոսմայստեր Չանդա Սանդիպանին (2656):

Հայ շախմատիստները հաղթանակով մեկնարկեցին: Սիմոնյանը պարտության մատնեց Մարիա Հնարային, իսկ Պողոսյանը հաղթեց Դիմիտրիոս Կիլակոսին: Մրցաշարում կանցկացվի 9 տուր: Գլխավոր մրցանակը 2200 եվրո է:

Պրոթեզներով վազորդը երազում է Լոնդոնի օլիմպիադայի մասին



Հարավաֆրիկացի վազորդ Օսկար Պիստորիուսը, որ հանդես է գալիս հատուկ պրոթեզներով, իր երկրի հավաքականի կազմում իրավունք է ստացել մասնակցելու թեթեւ atլետիկայի աշխարհի առաջնությանը: 400 մետր վազքատարածությունում նա անձնական ռեկորդ սահմանեց՝ ցույց տալով 45,07 վրկ արդյունք:

Օսկարն ընդամենը 11 ամսական էր, երբ անդամահատեցին նրա երկու ոտքերը ծնկներից ներքեւ, քանի որ ծննդյան օրվանից ոսկորներ չուներ այդ հատվածում: Նա կարողացավ հաղթահարել բոլոր դժվարություններն ու ապրում է լիարժեք կյանքով: Պիստորիուսը սովորել է սովորական դպրոցում, ընդունվել է Պրետորիայի համալսարան, որպեսզի մենեջմենտ ուսումնասիրի, բավական վարժ ձեռքի կառավարմամբ ավտոմեքենա է վարում:

Փոքր հասակից Օսկարը տարբեր մարզաձեւերով է պարապել, ուժերն է փորձել ռեգբիում, թենիսում, ջրագնդակում եւ ըմբշամարտում: Դպրոցն ավարտելիս նա կենտրոնացավ վազքի վրա: Պիստորիուսը մրցումներին մասնակցում է հատուկ պրոթեզների օգնությամբ: Ըստ գերմանացի պրոֆեսոր Գերտ-Պետեր Բրյուգեմանի, այդ պրոթեզները սովորական մարզիկների նկատմամբ Օսկարին առավելություն են ապահովում, ուստի թեթեւ atլետիկայի միջազգային ֆեդերացիան արգելել էր նրան մասնակցելու առողջ մարզիկների հետ մրցումներին: Սակայն հարավաֆրիկացի վազորդը բողոքարկեց այդ վճիռը Լոզանի մարզական իրավարար դատարանում եւ հասավ այն բանին, որ վճիռը փոխվեց: Նրան թույլատրեցին մեկնարկի դուրս գալ Պեկինի օլիմպիական խաղերում: Սակայն նա այդպես էլ մրցաստարեզ դուրս չեկավ, թեեւ մինչեւ վերջին պահը 4x400 մ փոխանցումավազքում պահեստայիններ թվում էր:

Հաշմանդամ թեթեւատլետն իր առջեւ խնդիր է դրել հանդես գալ 2012-ի Լոնդոնի ամառային օլիմպիադայում, այլ ոչ թե պարաօլիմպիական խաղերում, որին մասնակցելը նրան արդեն հեշտարքական չէ:

Լոնդոնի օլիմպիադայի ուղեգրի նվաճման 1-ին քայլը եղավ Հարավաֆրիկյան Հանրապետության թեթեւ atլետիկայի հավաքականի կազմում ընդգրկվելը: Իհարկե, դժվար թե Պիստորիուսին հաջողվի աշխարհի առաջնությունում մեդալ նվաճել: Նշենք, որ նրա անձնական ռեկորդը 45,07 վրկ է, իսկ 2009-ին Բեռլինում կայացած աշխարհի առաջնությունում ամերիկացի Լաշոն Մերիտը հաղթող էր ճանաչվել 44,06 վրկ արդյունքով:

Պարագվայն առանց հաղթանակի հասավ մինչեւ եզրափակիչ

Պարագվայի հավաքականը դարձավ ֆուտբոլի Ամերիկայի գավաթի խաղարկության եզրափակիչի 2-րդ մասնակիցը՝ 11 մ հարվածներով (5-3) պարտության մատնելով Վենեսուելայի ընտրանուն: Հանդիպման հիմնական եւ լրացուցիչ ժամանակում դարպասները մնացին անառիկ: Հետաքրքրական է, որ մրցաշարում անցկացրած 5 հանդիպումներում էլ պարագվայցիներին չի հաջողվել հաղթել. բոլոր խաղերն ավարտվել են ոչ-ոքի:

Եվ այսպես, հուլիսի 24-ին Բուենոս Այրեսում կայանալիք եզրափակիչ խաղում Ամերիկայի գավաթը կվիճարկեն Ուրուգվայի եւ Պարագվայի հավաքականները: Եթե ուրուգվայցիները 14 անգամ են նվաճել պատվավոր մրցանակը (վերջին անգամ՝ 1995-ին), ապա Պարագվայի ընտրանին հաղթող է ճանաչվել 1953-ին եւ 1979-ին:

Ուիլյամս քույրերը մրցակցությունից դուրս են

ԱՄՆ-ի մարզասերները երկրի ամենահեղինակավոր մարզուհի են ճանաչել թենիսիստուհի Սերենա Ուիլյամսին: Վերջին 5 տարիներին Սերենան 4 անգամ հաղթող է ճանաչվել այդ մրցույթում: Միայն մեկ անգամ հենծանվորդուհի Դանիկա Պատրիկին հաջողվել է գերազանցել Սերենային: Այս անգամ Պատրիկը գրավել է 3-րդ տեղը Վինուս Ուիլյամսից հետո:

Ամենահեղինակավոր մարզուհիների տասնյակում են նաեւ ԱՄՆ-ում բնակվող եւս երեք թենիսիստուհիներ՝ Մարիա Շարապովան (4-րդ տեղ), Աննա Կուռնիկովան (6-րդ) եւ Մարտինա Նավրատիլովան (7-րդ):

Շատերն այն կարծիքին են, որ եթե մրցույթի քվեարկությունն այժմ անցկացվեր, ապա հնարավոր է, որ հաղթող ճանաչվեր ֆուտբոլի ԱՄՆ-ի կանանց հավաքականի անդամներից որեւէ մեկը՝ օրինակ հարձակվող Էբի Ուոմբախը կամ դարպասապահ Խոուզ Սոլոն: Նշենք, որ ԱՄՆ-ի կանանց հավաքականն օրերս ավարտված ֆուտբոլի աշխարհի առաջնությունում գրավել էր 2-րդ տեղը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

«Արմենիա»-ն Չեխովի հյուրն է

4-րդ էջից

Նա ընդամենը երեսուն տարեկան էր: Նրա մեջ դեռ փոքրկվում էր պատանի Անտոնա Չեխոնտեի հոգին, երբ ֆելիետոններ եւ հումորիստական պատմվածքներ էր գրում: Բայց հենց այդ շրջանում Չեխովը հասկացավ իր գերխնդիրը: Դա Ռուսաստանն էր: Նրա իրականությունը: Գիտակցեց, որ իր համար գլխավոր թեմաներ են մտավորականության գաղափարական եւ հոգեւոր որոնումները: Նրան հավասարապես բարկացնում էին ե՛ւ ոմանց քաղաքական գոյակերությունը, ե՛ւ ուրիշների, ինչպես ինքն էր գրում՝ «հոգեկան խոնարհությունը»:

Մի խոսքով, Չեխովն ինձ համար ոչ միայն կուռք էր, հիացմունքի եւ պաշտամունքի առարկա, այլեւ հետազոտության ասպարեզ: Ես կարդում էի նրա ոչ միայն անկրկնելի պատմվածքներն ու վիպակները, որոնց մասին, ի դեպ, մի յուրահատուկ հուզմունքով էր խոսում Վիլյամ Սարոյանը, կարդում էի ոչ միայն նրա պիեսները, որոնք այսօր էլ չեն իջնում ողջ աշխարհի բեմերից, այլեւ բոլոր տպագրված նամակները: Դրանց մեջ կա ե՛ւ պոեզիա, ե՛ւ փիլիսոփայություն, ե՛ւ դրամա, ե՛ւ մի ողջ դարաշրջանի արացոլում: Եվ միեւնույնն է, կարծում եմ, ինձ ճնշում էր մի ինչ-որ բյուրեղացված, զտված մտավորականի, զեմստվոյական բժշկի, ավանդական պենսնեով փիլիսոփայի նրա քրեստոմատիական կերպարը: Այնինչ բարի իմաստուն էր, որն ուսուցանելու համար հետազոտում էր հոգու անատոմիան: Նրանից հավերժության բույրն է տարածվում: Ես կարդում եմ չեխովյան «Խոսում են ազատության մասին, լայնորեն օգտվելով ստրուկների ծառայություններից» միտքը եւ ինձ թվում է, թե նա այդ բառերն արտասանում է հիմա, այսօր: Կամ՝ «Ով չի կարող նվաճել քնքշանքով, նա չի կարող նվաճել նաեւ խորամանկությամբ»: Կամ լայնորեն հայտնի խորհուրդը՝ «Լավ դաստիարակությունը այն չէ, որ աղուրը չթափես սփռոցին, այլ որ չնկատես, երբ դա անում է ուրիշը»: Կամ՝ «Ուրիշի տառապանքները ծանակելը չպետք է ներվի»: Կամ՝ «Եթե սերը դաժան ու կործանիչ է, պատճառը ոչ թե նրա մեջ է, այլ մարդկանց բարոյականության»: Կամ՝ «Ազգային գիտություն չկա, ինչպես որ չկա ազգային բազմապատկման աղյուսակ: Իսկ ինչը որ ազգային է, դա արդեն գիտություն չէ»: Կամ՝ «Ոչ մի գեղեցկությամբ կինը չի կարող վճարել իր դատարկության համար»: Կամ՝ «Աշխարհների, մտքերի, էներգիաների, ճաշակների, տարիքի, մտածելակերպի տարբերությունների պատճառով երբեք հնարավոր չէ հավասարություն մարդկանց միջեւ: Այդ իսկ պատճառով բարոյականությունը պետք է համարել բնության անխախտ օրենք: Բայց մենք կարող ենք անհավասարությունն աննկատ դարձնել»: Լավ, բավական է: Թեեւ կարելի է եւս երկուսն ավելացնել. «Դամալսարանը զարգացնում է բոլոր ընդունակությունները: Այդ թվում՝ նաեւ հիմարությունը»: «Գրողը հրուշակագործ չէ, դիմահարդար չէ, զվարճացնող չէ: Նա մարդ է՝ պարտավորված իր պարտքի ու խղճի հետ կնքած պայմանի գիտակցմամբ»:

Ես, կարելի է ասել, ողջ կյանքում զբաղվել եմ Չեխովի յուրատեսակ հետազոտմամբ: Մարդու: Անհատի: Քանզի ինձ միշտ թվացել է, թե նրա կաղապարված դիմանկարը, լինի լուսանկար, թե Իլյա Ռեպինի հանճարեղ կտավը, այն չէ: Դա ամենը չէ: Դա ողջ Չեխովը չէ: Եվ ահա, թվում է, ես գտա այդ կերպարը: Եվ գտա ոչ այլ տեղ, քան Ցեյլոնում: Մինչեւ հիմա ես ծանոթ էի միայն մի հատվածի՝ այն նամակից, որ Չեխովը Ցեյլոնից ուղարկել էր հայտնի հրատարակիչ Ալեքսանդր Սերգեեւիչ Սուվորինին. «Ցեյլոնն այն վայրն է, որտեղ դրախտն է եղել: Այստեղ, դրախտում, ես ավելի քան հարյուր վերստ եմ անցել երկաթգծով եւ մինչեւ կոկորդս կուշտ եմ արմավենու անտառներից եւ բրոնզագույն կանանցից»: Ես չգիտեմ, գուցեեւ ինչ-որ տեղ այս նամակն ամբողջությամբ տրված լինի: Չէ՞ որ ես երեւի ամեն ինչ չեմ կարդացել Չեխովի մասին: Բայց ահա Ցեյլոնում, ռուսաստանյան մշակութային կենտրոնում հանդիպում եմ Մոսկվայի Պատրիս Լումումբայի անվան համալսարանի շրջանավարտ Ռոնջան Սենասիսինգհի հետ, որն էլ սինգալերեն է թարգմանել մեծ գրողի բազմաթիվ ստեղծագործություններ եւ գրել է «Չեխովը Ցեյլոնում» մենագրությունը: Եվ Չեխովին սիրահարված այդ մարդը՝ զարմանալի քնքուշ աչքերով, ինքն ամբողջովին սեւ, հենց՝ բրոնզագույն, կարդում է, արդեն սինգալերենից ռուսերենի թարգմանելով տեքստը, ավելի ճիշտ Չեխովի Սուվորինին գրած նամակի տեքստի շարունակությունը, բայց արդեն իր բառերով (գրքում ռուսերեն տեքստը չկա). «...կուշտ եմ արմավենու անտառներից եւ բրոնզագույն կանանցից: Եվ երբ ես երեխաներ ունենամ, ոչ առանց հպարտության կասեմ նրանց. «Շան որդիներ, կյանքումս ես սիրել եմ բրոնզագույն հնդկուհու... Եվ որտե՞ղ: Կոկոսի անտառում, լուսնյակ գիշերին»:

Այո, սա էլ Չեխովն է: Այո, նա հաճախ էր հիվանդ: Այո, հազում էր: Նա շատ վատ էր զգում «Պետերբուրգ» շոգենավի վրա: Նա գիտեր, որ երկար չի ապրելու: Եվ սակայն նրան պետք էին ե՛ւ ուղեւորությունը Սախալին, ե՛ւ հենց այդպիսի դժվարին վերադարձը: Պատահական չէ, որ ամենից շատ նա գրեց եւ գուցե ամենից հանճարեղաբար ստեղծագործեց հենց Սախալինից հետո: Կենսագիրները նշում են, որ Սախալինից հետո, մինչեւ իր կյանքի վերջ Չեխովը մերձմոսկովյան Մելիխովո կալվածքում գրեց ավելի քան քառասուն իրոք հանճարեղ ստեղծագործություններ: Այդ մասին ես իմացել եմ Չեխովի Մելիխովյան թանգարանում: Եվ հետո, ես գիտեմ, թե ինչ հիանալի էր Անտոն Պավլովիչը նկարագրում խնջույքները, առանձնապես խոհանոցի, սեղանի, ուտեստների եւ խմիչքի մանրամասները: Բայց ինքը չէր խմում: Այսպես ասած՝ չէր շարահում: Տանել չէր կարողանում, երբ սիրում էին մինչեւ վերջ դատարկել ըմպանակը: Այդ մեծ մարգարեն նույնիսկ շատ լավ գիտեր, թե երբ է մահանալու: Ինչպես ես գիտեր, թե ինչ է անելու մահից անմիջապես առաջ: Հանճարեղ «Բալի այգին» գրված է ծանր հիվանդությունից տառապող մարդու կողմից: Մարդու, որը հիանալի գիտեր, որ շուտով մահանալու է:

1904 թվականի ամռանը Անտոն Պավլովիչը եւ Օլգա Լեոնարդովնա Կնիպպեր-Չեխովան մեկնեցին Գերմանիա՝ առողջարան: Այն ժամանակ ողջ աշխարհում թնդում էր գերմանական Բադենվայլերի անունը: Հուլիսի մեկի լույս երկուսի գիշերը Անտոն Պավլովիչը արթնացավ: Նայեց կնոջը: Ժպտաց: Առաջին անգամ ինքն առաջարկեց բժիշկ կանչել: Եվ ինքն էլ բժշկին գերմաներեն ասաց. «Ես մահանում եմ»: Ինքն էլ իր համար թարգմանեց ռուսերեն: Խնդրեց Օլգա Լեոնարդովնային իրեն տալ շամպայնի մի լիքը գավաթ, ինչով շատ զարմացրեց կնոջը: Առաջին անգամ էր նման բան պատահում: Նա այդպես հուսարաբար էր ցանկանում ողջունել մահը: Մնացածը ավելի ճիշտ կլինի մեջբերել հենց Կնիպպեր-Չեխովայի բառերով. «Ապա վերցրեց գավաթը, դեմքով շրջվեց դեպի ինձ, ժպտաց իր զարմանալի ժպիտով եւ հանգիստ ասաց. «Վաղուց շամպայն չեմ խմել...», հանգիստ խմեց մինչեւ վերջ: Նորից ժպտաց: Լուռ շրջվեց ձախ կողքին եւ շուտով լռեց հավիտյան»: Դա Չեխովն էր...

Մեր նոր բարեկամ Ռոնջան Սենասիսինգհը «Արմենիա»-ի տախտակամածին պատմեց Չեխովի՝ Ցեյլոնում գտնվելու մանրամասները: Բաբասն, իհարկե, նկարահանեց նրա պատմությունը:

Ես այս տողերը գրում եմ այն սեղանի վրա, որի մոտ նստել է Անտոն Պավլովիչը: Գուցե սա բոլորովին էլ այն նույն սեղանը չէ: Բայց գլխավորն այն է, որ սա նույն Ցեյլոն կղզին է, որը նվաճվեց Չեխովի կողմից: Կղզի, որի նավամատույցին կանգնած է «Արմենիա»-ն: Կանգնած է առագաստանավը, որը վերջապես բուժել է իր բոլոր վերքերը եւ երբեմ ժամից ծով է դուրս գալու: Չէ՞ որ մեզ վաղուց սպասում են Կալկաթայում:

«Ազգ» օրաթերթի խմբագրությանը

Նաեւ խրախուսանքով

Հարգելի՛ խմբագրություն.

Ցեմ թքցնի՝ մեզ համար հաճելի անակնկալ էր «Երբ ուշադրություն կա ու արագ արձագանք» (20 հուլիսի 2011թ.) հրապարակումը: Առավել եւս ամառային այս շոգ օրերին, երբ ջրի սպառումը զգալիորեն ավելացել է եւ «Երեւան Ջուր» ընկերության աշխատակիցներից մեծ ջանքեր են պահանջվում մայրաքաղաքում կայուն ջրամատակարարում ապահովելու համար:

Իհարկե, մեր աշխատանքում էլ կան թերություններ: Ամեն ինչ չէ, որ հաջողվում է իրականացնել, բավարարել սպառողական պահանջարկը, նվազագույնի հասցնել բողոքները: Սակայն մենք հետեւողականորեն ձգտում ենք դրան եւ անկախ համակարգի տեխնիկական ոչ գոհացուցիչ վիճակից անում ենք առավելագույնն առաջին հերթին հայտարարված ջրամատակարարման նվազագույն ժամանակացույցը պահպանելու համար:

Ձեր հրապարակումն այս առումով մեզ համար ոգեւորիչ է ու պարտավորեցնող: Այո՛, ինչպես արդեն ասացի, մայրաքաղաքի ջրամատակարարման եւ ջրահեռացման գործում իսկ չեն բացթողումները: Սակայն եթե շուրջ 1300 աշխատակիցներից բաղկացած ընկերության գործունեության մասին դատենք տասնամյակների ընթացքում կուտակված թերությունների դեմ պայքարի արդյունքներով եւ համակարգի զարգացմանն ուղղված ջանքերով, ապա ջրմուղագործները, համոզված եմ, վաստակել են ձեռքբերումներով հպարտանալու որոշակի իրավունք:

Համաձայնեք, չի կարելի միայն քննադատել բացթողումների համար: Ինչպես ասում են՝ չի սխալվում միայն նա, ով ոչինչ չի անում: Պետք է նաեւ խրախուսել մարդկանց, նպաստել ընկերության եւ սպառողների միջեւ կապերի ընդլայնմանն ու համագործակցության զարգացմանը, հասարակության մեջ փոխվստահության մթնոլորտի ձեւավորմանը, ինչն առաջնահերթություն է հանրային ծառայություններ մատուցող ընկերությունների համար:

Շնորհակալություն նշված հրապարակման հեղինակ Մ.Բ.-ին՝ քաղաքացիական ակտիվության, ինչպես նաեւ «Ազգ»-ին՝ բարի կամքի դրսեւորման համար:

Հարգանքով՝ ԳՈՌ ԳՐԻԳՈՐՅԱՆ
«Երեւան Ջուր» ՓԲԸ
գլխավոր տնօրեն

Լույս է տեսել



«Նոյյան տաղան» տպարանը օրերս լույս է ընծայել Խ. Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի նախկին առաջին քարտուղար, հասարակական-քաղաքական ու պետական գործիչ, դիվանագետ Սուրեն Հարությունյանի «Անցյալի եւ ներկայի մասին» 2009 թ.-ին Մոսկվայում լույս տեսած ռուսերեն գրքի հայերեն՝ լրամշակված տարբերակը: 515 էջ ծավալով գիրքը կարելի է ձեռք բերել գրախանութներում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ

հ/հ	Գույքի հասցեն /գտնվելու վայրը/	Գույքի օգտագործման նպատակը	Հողամասի մակերեսը /քմ/	Շինության մակերեսը /քմ/	Մրցույթի պայմաններ		
					1	2	3
1	Հյուսիսային պողոտա թիվ 6/2	Ստորգետնյա ավտոկայանատեղի	4993.92	9604.0	Նվազագույն գինը 1.100.000.000 դրամ վճարումը առնվազն 2 տարվա ընթացքում ըստ օրացուցային եռամսյակի	օտարվող գույքի վերգետնյա հատվածի վերակառուցում, վերանորոգում, սամարման աշխատանքների կազմակերպում և լուսավորության ապահովում, նոր կանաչապատ հատվածների ստեղծում և գոյություն ունեցողի ավելացում	կատարել ներդրում առնվազն 3.700.000.000 դրամի չափով

Մրցույթին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Մրցույթին մասնակցել ցանկացող անձինք ածուղի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Մրցույթի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Մրցույթին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Մրցույթը կայանալու է 2011թ օգոստոսի 22-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանային օրերին՝ մինչև 2011թ օգոստոսի 19-ը, ժամը 16.00-ն:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Տեղադրեք եւ ընթերցեք անվճար հայտարարություններ www.vdv.am կայքում

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 21.7.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: